

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6


C 1926 or 251

ԼՈՅԻԶ ԼԻՆԴՆԵՐԻ

ՐԿԱԾՆԵՐԸ



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР



Ե Յ

8

Ա-33

~~№ 997~~

1924 OCT 20
8105 87 200

№ 4 ԳՐԱԴԱՐԱՆ „ՆՈՐ ԱԿՈՍ“-Ի № 4

U
21303
8
U-33

C 1926 N 251

Պատկանում էր բոլոր յերկրների, միացե՛ք.

167. 20/11



ԱՆՅԻԶ ԼԻՆԴՆԵՐԻ ԱՐԿԻՎՆԵՐԸ

Կ Ե Պ Ի Կ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՅԵՐԵՎԱՆ — 1924

-4 FEB 2013

4867

128022212

11
20812



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆ

Յ Ե Ր Ե Ղ Ա Ն
ՏՐԵՍԻ Ա.Ռ.Ա.ԶԻՆ ՏՊԱՐԱՆ
1924

3509

«ՆՈՐ-ԱԿՈՍ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՈՒՅՍ ՏԵՍԱՆ

- № 1. Լ. Տրոցկի.—Վեր փուլն ենք անցնում . . . 20 կ.
- № 2. Յե. Չարեհց.—Մաճկալ Սարոյի պատմութիւնը 20 »
- № 3. Ա. շ. Լովիանցիպան -- Դաշնակցութիւնը և պատերազմը 10 »
- № 4. Ալլիք Լիեզնեի արկածները 20 »

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

- № 5. Ի. Երեբուրց.—Ծխամորձը (պատմվածք).
- № 6. Ա. Կարինյան.—Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը.
- № 7. Կոմրնտերնի 5-րդ կոնգրեսի թեզիսները Կոմունիստական կուսակցութիւնների լուսակազմի մասին.

ԲՁ. 42200





60557.67

ՈՒՎ Ե ԱԼՈՅԻԶ ԼԻՆՒՆԵՐԸ

1919 թ. փետրվար 21-ին, Բավարիայի Սորհրդային հանրապետության գլուխ Կուրտ Եյաներն սպանվեց 23 տարեկան կոմս Արկո-Վանեյի ձեռքով: Լինդները, վոր այս գրքույկում իր կյանքի պատմությունն և անում, նվիրված հեղափոխական եր և անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ. Կարմիր Բավարիայում նա բանվորական հեղափոխական խորհրդի անդամ եր: Իր չափազանց գյուրաբորք բնավորության պատճառով նա զինվորական ծառայությունից ազատված եր:

Եյաների սպանությունը Մյունխենի բանվորներին մեջ չտեսնված հուզմունք ու վիշտի մունք առաջ բերեց: Լինդները սպանության լուրն աննեղուն պես վրդովված լանդաագի նիստերի սրահն և վաղում: Այստեղ նա ատրճանակի յերեք հարվածով ծանր վիրավորում և սոցիալ-դեմոկրատ Աուերին վորը Լինդների կարծիքով Եյաների սպանության նշան ավողն եր յեղել: Մի ինչ վոր մայոր Լինդների ճանապարհն և կարում և ձեռնամարտի բռնվում: Լինդներն ինքնապաշտպանության միջոցին կրակում և և սպանում մայորին: Լինդներին իբրև մարդասպանի արգարացրին:

բայց 14 տարի բանտ տվին մահափորձ կատարելու համար: Կոմս Արկո-Վալլեյին՝ Կուրտ Եյսներին անկյունի հետեվից սպանողին նույն ժողովրդական գատարանն լամրոց նստեցրեց, ուր նա հնարավորութուն ուներ ավտոմոբիլով զբոսնել, հյուրեր ընդունել, իսկ ամբոցից զուրս իր քեֆի տվածն անել:

Լինդներին տված դատավճիռը դատակարգային դատավճիռ էր: Լինդների արած քայլն ավելի պարզ հասկանալի դարձնելու համար բավական է ասել, վոր սոցիալ-դեմոկրատ Աուերը Կուրտ Եյսների սպանող կոմս Արկո Վալլեյին հիվանդանոց ծաղիկներ ու շնորհավորանքներ էր ուղարկում:

Լինդները կենդանի թողված է բավարական հայտնի Մարունուբինգ «ուզղիչ տանը»: Թե վորքան կամք է ուշժ ունի այդ մարդը՝ ցույց է ապրիս նրա այս պատմությունը, վոր նա զրի յե ասել բանտում 4 տարի նստելուց հետո: Այս փոքրիկ զբքույկը բողոքն է բարձր այն բանվորների, վորոնք կենդանի-կենդանի թողված են Գերմանիայի «ուզղիչ տներում»:

ԻՄ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ուզղիչ տան» խցիկում մարդ բավական ժամանակ է ունենում իր անցյալ կյանքի մասին մտածելու համար: Յես կը պատմեմ իմ մանկությունից: Հաճախ եմ հիշել իմ մանկության որերը: Իմ կյանքս էլ յեղել է այնպես, ինչպես չքավորների միլիոնավոր յերեխաների կյանքը. մանուկ հասակումս կյանքը ինձ էլ իր սև յերեսն է ցույց տվել միշտ. արեն ու լույսը ուրիշներին, սավերն ու խավարը՝ ինձ:

Ծնվել եմ յես Բելհայմում: Այս փոքրիկ քաղաքը, ինչպես դիտեք գտնվում է Մայնց-Դունայ ջրբանցքի վերջում: Պատանեկությանս շրջանում բնակիչների մեծ մասը հողագործներ էյին: Բայց արդյունաբերության զարգացումը մանր մեշանական այդ խավերն էլ 20-րդ դարի հոսանքի մեջ նետեց: Դատակարգային հակամարտությունը քանի գնում սրվում էր:

Գեղեցկանիստ քաղաք է Բելհայմը: Քաղաքի կենտրոնը, հնամյա պատի մնացորդներով շրջապատված պատվելի բյուր գերների բնակավայրն էր հանդիսանում: Այնտեղ են բնակում հացթուխներ, մսագործներ, քաղաքային վարչության պաշտոնյաներ, քահանա՝ մի խոսքով քաղաքացիներ, վորոնք ամբողջ քաղաքն են կառավարում: Շուկայի հրապարակում կարածածկ խանութների շարքն է գտնվում: Հենց այժմ էլ աչքիս առաջն է ծննդյան տոների պատկերը, յերբ մենք յերեխաներս խոնվում էյինք խանութների լուսավորված պատուհանների առջև և դարմանքով ու նախանձով դիտում ցուցադրված իրերի հեքյաթային, առասպելական հոյսկապությունը: Աղքատ յերեխաներ էյինք, և հեքյաթ էր թվում մեզ ամեն ինչ, վոր կար այդ տոնական խանութներում: Այնտեղ ցուցադրված էյին լավ կտորից շորեր հազած տիկնիկներ, հատը 50 պֆենինգ, փոքրիկ սալակ իր ձիերով ու ամբողջ սարքով՝ 2 մարկ 50 պֆենինգանոց — բայց այդ ամենը բանվորների յերեխաների համար չեր. մենք միայն նայել կարող էյինք: Փայտահատներն որեկան 12 ժամ էյին աշխատում և ընդամենը 2 մարկ 60 պֆենինգ էյին ստանում: Իսկ լուցկու

գործարանի բանվորները, ամեն ուր իրենց թոքերից մի կտոր թռչնավոր գազերին զոհելով, զբանից ել քիչ վարձ էլին ստանում: Այն ժամանակ, վորի մասին յես պատմում եմ, արդյունաբերական կապիտալը գեռնոր եր նվաճում յերկիրը: Բանվորները և բանվորուհիներն անպաշտպան էին, ճակատագրի կամքին թողնված: Մեքենաների վրա աշխատողները դժբախտ դեպքերից սպանովված չէին, թունավոր արտադրութեան գործարաններում բավարար չափով չէր մաքրվում ողը: Բայց այնուամենայնիվ եժան բանվոր ձեռների պակաս գոյությունն չունեի:

Ծնողներս բնակվում էին մի ձուռ փողոցում, քաղաքային դարպասի մոտ: Նրանք բնակվում էին վոչ թե փողոցի կողմը, այլ հետեվի տանը և միայն մի սենյակ ունեյին, ուր թե բնակում էին, թե քնում, թե յեփում-թափում, թե աշխատում: Նրանց կյանքն աղքատութեամբ ու հոգսերով եր սկսվի:

Աղքատութեան բեռը կրում եր, ճնշում իմ ծնողներին: Յես գեռ յերեխա էյի և չէյի հասկանում գոյություն ունեցող հարաբերութեանները: Միայն այսոր, յերբ իմ մանկութեան ցաք ու ցրիվ, անկապ հիշողութեաններս եմ քրքրում՝ յես կատարյալ պատկերացում ունեմ մեր ամբողջ աղքատութեան մասին: Յերբ ինձնից փոքր յեղբայրներս ու քույրերս արդեն անկողնումն էին, իսկ յես արթուն մնում էյի մի վորեվե անկյունում՝ տեսնում էյի, թե ինչպես հայրս ու մայրս յերկար նստում էին սեղանի մոտ՝ նավթե մխացող լապտերի լույսով և զրույց էին անում: Հաճախ նրանք ինչ վոր հաշիվ ու համար էին անում և նրանց բանվորական գլուխները կախվում էին սե-

ղանի վրա: Այնքան բանի մասին նրանք պիտի խոսեյին, խորհուրդ անեյին, այնքան հոգսեր քաշեյին և տակավին նրանք ամենից աղքատներն ու դժբախտները չէին մեր քաղաքում:

Յերկար տարիներ իմ հայրը, ինչպես ասում էյին, «Չբանցքի ձիավորի» պաշտոն եր կատարում:

Ինքը ձիով և յերկու ձի ել հետեվից՝ նա յերկար փոկերով նավ եր քաշում Բելհայմից Բամբերգ և հակառակ ուղղութեամբ: Դա մեժ ծառայութեան եր, վոր ինձ պես լակոտին հիանալի յեր թվում, բայց իրոք նա շատ քիչ արդյունք եր տալիս: Հայրս 1866 և 1870 թ. թ. գինվոր եր յեղած և քանիցս վերք եր ստացել: Դրա համար նա մեղալ եր ստացել: Նույնպես զրա համար տարիներ շարունակ նա դաժան կռիվներ ու պլսացավանք եր ունենում տարեկան տաս մարկ թոշակ ստանալու համար: Հայրս ջերմ հայրենասեր չէր, բայց և այնպես նա յել իր մեջ ծծել եր գավառային քաղաքի վողին, քաղաքի վորը փայլուն անցյալի հյութերով եր սնվում, թրձված եր այդ անցյալով և սպազայի համար ել անցյալի հարանման կրկնութեանից ավիլին ուրիշ վոչինչ չէր ցանկանում:

Յեթե ձիշտ ե, վոր մարդ իր շրջապատի պայմանների արդյունքն ե միայն, սպա կրկնակի հարգանք պիտի տածել այն մարդկանց հանդեպ վորոնք թեկուզ անտեսական շահերի թեղադրութեամբ՝ ձգտում են դուրս պրծնել վատ միջավայրի ճահճից, իրենց սեփական ուժը գործադրելով դաժան պայքարում, ուրիշներին չվնասելով: Այդպիսի մի պայքար էյին մղում իմ ծնողները:

Ութը թե ինը տարեկան էյի յես, յերբ մենք

հետևի բակի նեղ ու սեղմող սենյակից փողոց հայտնաբերելու անհավանականությունը: Հարյս թողել էր ջրանցքով մեկ վայր ու վեր ձի քշելը և ամանեղենի ու ճոթեղենի առևտուր սկսել:

Մեր առևտրական ձեռնարկությունը կայուն հիմքերի վրա չէր դրված, ինչպես դա վայել է մի վաճառականի, վոր արեւը ծագելուն պես բացում է իր խանութը և գնորդներին սպասում: Մեր առևտուրը չորս անիվների վրա քաղաքի շրջակայքումն էր շարժվում: Ամանեղենը և գալանատերեւան սովորաբար փողով չէլինք ծախում, այլ քուրջով, հին յերկաթով, մետաղով և այլ նման բաներով էլինք² փոխանակում. դա մի ծանր, հոգնեցուցիչ աշխատանք էր:

Ամեն որ արեւածագին նորից սկսվում էր ճամբորդությունը սայլակով, գյուղից-գյուղ: Սայլակը կանց էր առնում գյուղամիջում և առևտուրը սկսվում էր: Մայրս մեջքին ծանր կողով էր տանում, փոխանակելիք ապրանքներով լցրած, հայրս էլ նրա հետ անետուն էր ման գալիս: Մենք յերեխեքս ազելի փոքրիկ, ձեռքի սայլակով նրանց հետևից էլինք գնում և ոգնում: Ինչքան հաճախ եմ հիշում այդ վտճառակաճանակաճան մեր ճամբորդությունները:

Այնտեղ կապիտալ, ծանրաբարո գյուղացիներ էլինք, վորոնք մեր քթի տակ դռներն էլին շրխկցնելով փակում, շներ էլին քսի տալիս մեր վրա, քշում էլին մեզ, կարծես թափառական գնչուներ լինէլինք:

Բայց յեթև գյուղացին փոխանակելու մի իր էր ունենում, սկսում էր յերկար ու բարակ բազար՝ դույզ ժանգոտած նալի, ալորի, մի քանի հին փոսած քուրջի կտորներ լրա, վորոնց փոխարեն գյուղացին

քիչ էր մնում, վոր խոհանոցի ամբողջ սարք ստանալ ուղենար:

Մարդիկ վորքան շատ փող ու իշխանություն ունենային, այնքան ալելի կոշտասլրա էլին լինում: Փոքր մարդկանց հետ մեր առևտուրն ալելի արագ, հարթ և անուշ էր գնում:

Մինչ հայրս աշխատում էր, յես փոքրիկ սայլակով հավաքածը տանում էլի ու մեծ սայլակը բարձրում: Դա դուրեկան և առողջ գրադմունք չէր, հին քուրջերը հոտած էլին, գնված վոսկերը նեխված, յերկաթը կեղտոտ և ժանգոտած: Մենք թերմացքով էլինք առևտուր անում և այդպիսով մեր հացն աշխատում: Այն ժամանակ արդեն առաջին անգամ յես սկսեցի մտածել մարդկանց միջի՝ հարուստների և ազքատների տարբերությունն:

Դպրոցական արձակուրդներին, յերբ իմ գասընկերներն առավոտից մինչ իրիկուն գետափին ու անտառում քեֆ էլին քաշում, յես պարտավոր էլի գյուղերում շրջել, անկախ նրանից՝ թև արեն և այլում, անձրև և կամ գոռ փոթորիկ: Գորպիսի բավականությամբ յես էլ ընկերներիս հետ անտառում կը թուչկոտեյի: Չի կարելի ասել, վոր ինձ դժբախտ էլի զգում. վերջ ի վերջո ամեն մի պատանեկություն, նույնիսկ բանվորի զավակի պատանեկությունը պուհիսայով ու բոմանտիկայով լեցուն է: Կարծում եմ, վոր ճամբորդելու իմ անհուն ցանկությունը, հետո յերկրների սերը, վորից տարված հետագայում յես յերկրագնդի բոլոր մասերն ընկա, իմ մեջ արմատ է գցել զեռ այն ժամանակ, յերբ ծնողներիս հետ գյուղից-գյուղ էլի շրջում:

Իհարկե, հաճախ ծնողներին զանազան հարցեր էջի տալիս, յերբ ինձ անհասկանալի բաներ էջին հանդիպում: Մինչև այսօր ել իմ ականջում հնչում են մտքս խոսքերը. «Տղաս, այդ դու զեռ չես հասկանում»: Յես արդեն նկատում էջի տարբերություններ, բայց զեռ չէջի հասկանում:

Գովառային քաղաքը մի մեծ վանդակ է, վորտեղ փակված են մարդիկ և իրար են հետեւում: Այնտեղ հարեվանսներ կային, վորոնք միշտ իրար բարի լույս էջին մաղթում և իրենց կյանքի նպատակը ուրիշի գաղտնիքներն իմանալն էջին համարում:

Իմ մայրը բացառություն էր: Անպայման նա աստվածասեր կին էր: Բայց աստվածը նրա համար լոկ անձնական գործ էր, և վոչ թե տերտերի: Յես գիտեմ, վոր հաճախ վոսկոր կամ քուրջ բերող մի խեղճ ազախնի նա ավելի շատ կտոր էր տալիս, քան մի հարուստի: Վոչ մի արհեստավորի աշակերտ մեր գոնից առանց նվերի չէր հեռանում. իր գավակները նա ճշմարտախոսություն էր պահանջում: Ստախոսությունը նրա աչքում ամենամեծ մեղքն ու հանցանքն էր:

Նույնն էր և հայրս՝ չոր, հասարակ, բայց իր նպատակները համառ հետապնդող և միշտ պատրաստ իր հարեվանսներին ու բարեկամներին ոգնելու: Բայց ստախոսությունը, անազնիվ արարքը, կեղծավորությունը նա ատելով ատում էր: Նա դուրբարբորք էր, բայց շատ անաչառ իր ընտանիքի վերարերմամբ:

Մայրս հոգեպես իշխում էր տանը և խելացիորեն կառավարում հորս կամքը: Այդպես էր մեր կյանքը: Կիրակի օրերը յերեկոյան մի վորեկ զվարճատե-

ղի էջինք գնում, կամ անպաճույճ մի տոնատեղի: Դա հանգստացնում էր աշխատանքից հոգնած մեր ջղերը և աշխատանքային շարաթվա մեջ մի քիչ այլազանություն մտցնում:

Տարիներն անցան, և մենք ել ավելի բարեկեցիկ կյանք ունեցանք: Ախտում արդեն յերկու ձի ունեւէինք: Տունը, ուր առաջ վարձով էջինք բնակվում, արդեն մեր սեփականությունն էր: Առևտուրն էլ առաջվա նման խղճուկ չէր: Յերկու սիրուն ձի լըծած մեծ սայլով մենք տոնավաճառներ էջինք գնում: Ազատ ժամանակ մի քանի շարաթով յես գյուղ էջի գնում հանգստանալու:

Դպրոց այնքան էլ սիրով չէջի հաճախում: Միայն հետո իմ մեջ զարթնեց սովորելու ձգտումը: Որինակելի աշակերտ չէջի, բայց այնքան էլ վատ սովորողները չէջի:

II

ՈՒՍՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Դպրոց ավարտելուց հետո արհեստ սկսեցի սովորել Բեզնարուրգ քաղաքում: Ինձ սովորեցնում էջին այնպես, վոր յես ապագայում անկղու, համբերող բանուկ անասուն գառնամ: Մայրաքաղաքում ապրող յերեսասարկ պրոլետարի բանն անհամեմատ լավ է. նա կամ մեծ խանութ և ընկնում, կամ գործարան, աշխարհ տեսած ընկերներ և ունենում և ամեն տեղ էլ ուտում և գիտություն ձեռք բերելու առիթ և գտնում: Նա յեթե ցանկանա, իր ուժերով իրեն կարող և պահել և մարդ գառնալ: Այն, վոր նրան աղքատները դպրոցը չի տվել՝ լայն հայացքներ

և ընդարձակ հորիզոններ՝ նա ուրիշ ճանապարհով ձևաք կը բերի և վերջ ի վերջս կյանքի բանավիճերին կտիրանա: Նա ընկերներ և սրտակիրներ կգանի: Վերոնք կդպնեն բոլոր կասկածները փարստելու և մուրթութուններէց ազատվելու:

Իմ ուսման շրջանում յես վոչ ընկեր, վոչ եք զեկավար գտա: Ուշ յերեկոյան իմ մենավոր սենյակս վերադառնալով (վարպետիս տանն էյի ընակվում), յես խսկույն քնում էյի մի կոշտ թախտի վրա՝ հոգնած և ուժասպառ: Վաղ լուսաբացին աշխատանքը նորից սկսվում էր: Վարպետացուներն իրենք էլ զեռ յերիտասարդ տղերք էյին: Նրանք ինձ միտայն մի արհեստ չէյին սովորեցնում (արհեստս մսագործությունն էր) այլ և շատ ուրիշ բաներ:

16 տարեկան տղան ստրկորեն հետեւում էր 20 տարեկանի որինակին: Բոլոր յերիտասարդ տղամարդկանց նման յես էլ իմ արջան հետ կովում էյի: Սկզբում յերազներս վավաշոտ էյին, հեշտասեր. նրանց թագուհին կինն էր, կիրքը: Բոլոր ցանկությունները վոր իմ մեջ զարթնում էյին ընկերներէս ցերեկվա խոսակցություններէ և յերգերի ազդեցության տակ, քնիս մեջ հագուրդ էյին ստանում:

Հին քաղաքում մի տուն կար, վորի գոանը կարմիր լապտեր էր վառված: Այդ կարմիր լույսի շուրջն էյին խոնվում իմ ցանկությունները և կարոտները: Յես իմանում էյի այդ տան բոլոր խորհուրդները ամեն յերկուշարթի, յերբ վարպետացուները պատմում էյին իրենց կիրակնորջա արկածները: Բայց յես յերկար ժամանակ չմնացի լուս լսողի գերում. շուտով յես էլ սկսեցի իմ կիրակնորջա քաջագործությունները նրանց պատմել:

Կնոջ կարոտը, հեռու-հեռավոր աշխարհի անծանոթ լայները տեսնելու պատրանքը կլանել էր ինձ ամբողջ էյությունը: Վարպետացվի քննությունը փայլուն կերպով բռնեցի: Կյանքի ու աշխարհի ճամբեն բաց էր: Վերցրի կապոցս և Մյունխենի ճամբան բռնեցի. քույրս այնտեղ էր մարդու զնացած և մի անտեսություն ուներ, ուր յես պետքական ոգնական կարող էյի լինել: Բայց ճամբորդելու ծարավը շուտով ինձ այդտեղից էլ հանեց ու հեռուն տարավ: Արդեն մի քանի ամսից հետո սկսվեց իմ վաղքը բախտի հետեւից— յես բուռն կերպով ձգտում էյի հեռավոր յերջանիկ յերկրներ գնալ: Բայց ուրիշ պատճառներ էլ ինձ հեռուն էյին քշում: Իմ արհեստի մեջ կատարելագործվել էյի ուզում: Հին սովորություն կար, վոր յերիտասարդ վարպետացուները լավ վարպետացու ապա և լավ ուստա դառնալու համար, աշխարհ պիտի ման գան, աշխարհ պիտի տեսնեն: Այդ ավանդությունը զեռ անցյալ դարերից գոյություն ունի, յերբ զեռ հնարավոր էր վարպետացվից ուստա դառնալ: Այժմ արդյունաբերության զարգացումն այդ հին տրագիցիաներին վերջ և զրել:

Ասանց վորոշ հույս ունենալու յես բռնեցի Զվիցերիայի ճանապարհը: Գրպանումս յեղած փոքրիկ գումարը շատ շուտով սպառվեց: Աուգսբուրգի վրայով յես ուղեվորվեցի Լինդաու և Կոնստանց— զվիցերական սահմանը, և վորովհետեւ յես մեարիկական վրկայական չունէյի, գաղտնի կածաններով սահմանանցա: Հասա Ռոմանսգորն, այնտեղից Սեն-Գալլեն, բարձրանիստ լեռնաշխարհում յեղա, անցա մինչեւ Բեռն և հավերժական ձյունով ծածկված լեռնագա-

գաթները տեսա: Բազելում գործ գտա: Բայց հենց այդ քաղաքի շրջակայքումն էլ ճակատագիրս ինձ գտավ: Անձնադիր չունենալուս պատճառով մի ժամագարմ ինձ հետ ուղարկեց Գերմանիա: Աքսորվելուց հետո իմ հիացմունքը ազատ Զվիցերիայի և նրա բարձր սարերի հանդեպ քիչ պաղեց: Այն ժամանակ հիշեցի, վոր Ֆրայբուրգում մի ազգականուհի ունեմ: Վորոշեցի այցելել նրան: Ինձ գրկարաց ընդունեցին: Գործ փնտրեցի և յերշիկի գործարան մտա:

Յես սովորել եյի փոքրիկ քաղաքում, վարպետի և վարպետացվի հետ մի տան մեջ — իսկ այստեղ գործարանում արդեն աշխատանքի բաժանում կար և մեքենաներ եյին գործում: Աշխատանքի ժամերը խիստ վորոշ եյին: Իմ աշխատանքի նոր վայրը կատարյալ կապիտալիստական ժամանակակից տիպի գործարան էր: Գործարանում աշխատողներս վոչ վարպետացուներ եյինք միջնադարյան իմաստով, վոչ էլ ազատ մարդիկ: Դա ինձ համար նոր, չտեսնված աշխարհ էր: Այս գործարանում սկսվեց իմ գիտակից կյանքը: Առաջին անգամ այստեղ հասկացա, թե ինչ ուժ ունի բանվոր դասակարգը, ինչ ստել և միջեզնույն արհեստի մարդկանց մշտական հորարերութունն ու կապը, հասկացա կազմակերպության ու համախմբման կարեւորութունը կեղեքման դեմ կռվելու համար:

Հատկապես ուժեղ կապվեցի մի ընկերոջ հետ, վորն սկզբից ինձ սիրալիբ վերաբերմունք և մեքենայական աշխատանքի տեխնիքական ձեւերը ցույց տվեց: Չնայած վոչ վոք ինձ վոչինչ չէր ստել՝ յես տեսնում ու զգում եյի, վոր այդ մարդը հաստատուն աշխարհահայացք ունի, վոր նա մի ինչ վոր

աղբյուրից ստանձին ուժ և ստանում: Հաճախ եյինք մենք զրուցում և նա ինձ հարց ու փորձ էր անում իմ նախկին աշխատանքի և ուսման պայմանների մասին: Մի անգամ էլ նա ինձ առաջարկեց միության անգամ գրվել. «Ամեն մի կարգին բանվոր-մտագործ կազմակերպված պիտի լինի»: Եդ յես իսկույն հասկացա: Բացի գրանից ինձ գրավում էր միությունից ոժանդակութուն ստանալու հնարավորությունը, յեթե, բան է, պատահի, մի քանի ամսից գործարանը թողնեմ իմ ճամբորդությունը շարունակելու համար:

Ընկերոջս հետ միության գրասենյակը գնացի: Դա մի փոքրիկ, ազքատ կահա վորված շենք էր: Պատերին, գրասեղանի գլխավերեւը մեծ սև շրջանակների մեջ կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Ենգելսի պատկերներն եյին կախած, Հակառակ կողմի պատին աչքի յեր զարնում մի մեծ նկար — մի կին կարմիր գրոշակ բարձրացրած՝ նորածագ արեվին և զիմա վորում: Նկարի հետեվի մասում անթիվ բանվորներ, կանայք և յերեխաներ խոր ազաչանոք իրենց ձեռներն եյին պարզել դեպի արեվն ու կյանքը: Մինչ ընկերս խոսում էր, յես այդ նկարներն եյի գիտում: Ուժեղ ապավորություն թողեց ինձ վրա կարլ Մարքսի առյուծի գլուխը: Պարզ հաշիվ չէյի կարողանում սալ ինձ՝ թե ինչ զպացումներ են աճում մեջս, բայց և այնպես, թեպետ անորոշ, զպացի անարդարության դեմ կռվելու անհրաժեշտությունը: Յես համոզված եյի, վոր միության հասարակ անգամատոմսը բաց կանի իմ տուժ բոլոր ազնիվ բանվորների սրտերը, վորոնք հակառակ դեպքում ինձ անհասկանալի և ոտար պիտի մնային: Այդ անգա-

մագրքույկը ցույց եր տալիս, վոր յես պրոլետարա-
կան ընտանիքին եմ պատկանում:

Ընկերոջն բարեկամական ոգնությունը դործա-
բանում աշխատանքի ժամանակ ապացուցեց ինձ,
վոր բանվոր դասակարգն ընկերական համերաշխ ու
միակամ ընտանիք ե. հազիվ թե հազար ու մի ճա-
ռերն ավելի շատ բան սովորեցնեյին ինձ: Յես սոցիա-
լիզմի մեծ բանակի շարքերը մտա: Առայժմ յես
սոսկ շարքային եյի, շարժումի անխոս ստատիստ եյի
և կարծում եյի, թե կազմակերպությունը մենակ մոզա-
կան գավազանն է ազատության աշխարհի ճանապարհը
ցույց տվոր: Յես չափազանց վտղեվորված նորակոչ
եյի: Հետո անտարբերության յերկար ու ձիգ տարի-
ներն յեկան: Կյանքն ինձ իր դաժան ճիրանների մեջ
սեղմեց:

Յոթն ամիս ֆնացի Ֆրայբերգում, հետո ամբողջ
Գերմանիան անցա ծովը հասնելու համար: Տեսել
եյի Ալպերը, հիմա ովկիանոսն եյի ուզում տեսնել:

Դեռ Հերբերգենում հաճախ պատմություններ եյի
լսել մեծ նավահանգստային քաղաքների կյանքից: Ըն-
կերներ ունեյի նախկին ծովայիններ, վորոնք ամենա-
գրավիչ գույներով եյին նկարագրում ծովային կյանքը:
Ականջ եյի կախում նրանց պատմածներին և նախանձում
նրանց: Այն ժամանակ յես դեռ լուրջ կերպով հարց
չեյի տալիս ինձ, թե ինչու այդ պատմողները չեն ֆնա-
ցել իրենց նավերի վրա, յեթե ովկյանոսային ճամբոր-
դություններն այդքան սքանչելի եյին: Ինչո՞ւ նրանք
Նյու-Յօրկ կամ Յոկոգամա չեն գնացել: Ինչո՞ւ յես
թողիլ ովկյանոսը և հիմա սոչորվում եմ կիզիչ արեւի
սոսկ մեծ ճանապարհներին, հաճախ սոված, գլուխ

գնելու տեղ իսկ չունենալով: Հետո միայն, յերբ յես
եւ ծովիը սկսեցի չափչփել, հասկացա թե ինչու
ծովայինն ել կարող ե չոր ճամբեքով ման գալ:

Մի անգամ մի լավ տղա ինձ հարյուր հազար
ձեւով սկսեց ապացուցել, վոր ծով մեկնողները նախ
պիտի ունենան: Յեւ վորովհետեւ յես շատ եյի ուզում
ծով գուրս գալ՝ մարմինս հանձնեցի նախըվորների
կամքին:

79. 5509

Յես զեպի ծով ուղեվորվեցի: Սովը տանջում եր
ինձ, վրաներս ցավում եյին, բայց ճանապարհի վեր-
ջում ինձ նոր տարերքն եր սպասում՝ խարխիսների
վրա նավեր եյին որորվում. այդ նավերն եյին ինձ
նոր ու չտեսնված աշխարհ տանելու: Լյուներուրգի
հարթավայրը բոց եր թափում ամառային արեւի ճա-
ճանչների տակ: Ժահիճներ, ավազներ, կարմիր ար-
տեր՝ այլազանություն եյին մտցնում գաշտավայրի
միորինակության մեջ: Շատ հազվագյուտ եմ ծառերն
ու մանավանդ գյուղերը: Ժանապարհորդներն ասում
են, թե Լյուներուրգի գաշտը գեղեցիկ ե, բայց յես
հոգնած եյի ու սոված, վող ել չունեյի, իսկ գեղեց-
կությունը կարող ե զգալ միայն կուշտը և հա-
րուսաը:

Ճանջալից ճամբորդությունից հետո վերջապե
Համբուրգ հասա:

Ի հարկե իսկույն և եթ նավահանգիստ գնացի: Նա-
վակայմերի մի հսկայական անտառ եր ցցված այնտեղ,
միտում եյին ովկիանոսյան մեծ շոգենավերի ծխնե-
լույզները: Վտոնում եյին սիրենները: Նավակները
դեռ ու դեն եյին սուրում, ջրերը ձեղքելով: Իսկ այդ

ВМВЯКО
ИСТОРИ
ГОСТРОБЕ
Академии
СССР



ամենի վրա ծուխն ու անխափոշին եր իշխում: Ողբ անքում եր: Գնացքներ եյին անցնում: Յերկաթե վերհանիչներն իջնում եյին ու բարձրանում, իրենց բռնով: Ինձ համար սա մի նոր աշխարհ եր, ուր փոքրիկ քաղաքից յեկվորը կարող եր կորչել:

Բայց գոյություն ունի և ուրիշ Համբուրգ: Այնտեղ չի կուտակվում ամբողջ աշխարհի հարստությունը, այլ կարիքն և կծկված: Պանդոկներում ծովայիններ, հարբած նավաստիներ, նավամատուցի բանվորներ և պոռնիկաների գուլնգուլն շարքեր տեսա յես այդ յերկրորդ Համբուրգում: Դա մի պատկեր եր, վոր հետագայում յես կարող եյի տեսնել ուրիշ շատ քաղաքներում՝ Ամստերդամում, և Լոնդոնում, Նյու-Յորկում և Սիդնեյում, Բոմբեյում և Նեապոլում:

Յերբ նավաստիներն իրենց յերկար ճամբորդությունից հետո ցամաք են վերադառնում նրանք գինետուն են գնում, կամ աղջիկներ ձուտ: Համբուրգում, Նյու-Յորկում, թե Լոնդոնում՝ ամեն տեղ միևնույնն են կատարվում: Նավահանգիստներ լեփ-լեցուն են պոռնիկ կանանցով՝ սպիտակամորթ, սևամորթ գեղնամորթ և կարմրամորթ: Նրանք նստում են գարեջրետներում և նավաստիներին սպասում: Հոսում և արաղն ու գարեջուրը և մարդկանց ավելորդ, անպետք արարքներ թեկադրում:

Հիմա միայն, բանտի խցիկում մենակ նստած, յես կարող եմ հանգիստ գրել այս ամենի մտտին: Համբուրգ նոր յեկած ժամանակս յես դեռ չեյի գտնում, թե ինչ անհուն անդունդ ե, թե ինչ կեղտոտ ճահիճ և նավահանգստային քաղաքը, վորովհետև յես ջահիլ եյի և կամենում եյի նավաստի դառնալ:


Համբուրգում յես գործ չգտա: Համբուրգ-Մենբրիկյան շոգենավային գծի համար բանվորներ վարձող գրասենյակը մի բլրակի վրա յեր, վորտեղից նավահանգստի մեծագուշն մասը յերեվում եր: Յես դեպի այդ գրասենյակն ուղղեցի քայլերս: Կարմիր աղյուսաշենքի առջևի հրապարակում նավաստիներ եյին կանդնած:

Այնտեղ կային լավ հաղնված սպաներ առևտրական նավատորմից, տեխնիկական պաշտոնյաներ, մեքենավարներ՝ չոսլայած ոձիքներով, կարճ ծխամորճեր բերաններին: Նրանց աջանքում թրև եյին գալիս վտտի վրա առևտուր անողներ, վորոնք առնում եյին ու ծախում ամեն ինչ՝ հուտասպերչի ոձիքներից սկսած ու վտակի ծխախոտատուփերով, ազամանդե մատանիներով և ծովային հագուստներով վերջացած: Շենքի ներսում կյանքը յետում եր: Յերբեմն բացվում եր փոքրիկ պատուհանը և պաշտոնյան բարձր ձայնով հայտնում եր առաջ նավի անունը և ապա այդ նավի համար անհրաժեշտ նավաստիների մի ամբողջ ցուցակ: Ով ցանկանում եր նրանց հետ գնալ, ով ընդունում եր ծառայությունը՝ նա պատուհանից ներս եր տալիս իր ծովային գրքույկը:

Նավի անունը լսելով շենքի առաջ սպասողներն իսկուշն և եթ սկսում եյին քննադատել: Այդ «արկղը» — նավաստիների բերնում «արկղ»՝ նավ ասել ե — անպետք բան ե: «Ենտեղ նավապետը վատ ե»: Ենտեղ սնունդը լավ ե» և այլն:

Ինձ այնպես յերեվաց թե, ծովայինները մի մեծ ընտանիք են կազմում: Նրանք ճանաչում եյին բոլոր ծովերն ու նավերը: Նրանք իրարուց պատմում եյին

Handwritten notes in the left margin: 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100.



ամենի վրա ծուխն ու ամխափոշին եր իշխում: Ողբ անքում եր: Գնացքներ եյին անցնում: Յերկաթե վերհանիչներն իջնում էյին ու բարձրանում, իրենց բեռնով: Ինձ համար սա մի նոր աշխարհ եր, ուր փոքրիկ քաղաքից յեկվորը կարող եր կորչել:

Բայց գոյություն ունի և ուրիշ Համբուրգ: Այնտեղ չի կուտակվում ամբողջ աշխարհի հարստութիւնը, այլ կարիքն է կծկված: Պանդոկներում ծովայիններ, հարբած նավաստիներ, նավամատուցի բանվորներ և պոռնիկատների գուլյնագուլյն շարքեր տեսա յես այդ յերկրորդ Համբուրգում: Դա մի պատկեր եր, վոր հետագայում յես կարող էյի տեսնել ուրիշ շատ քաղաքներում՝ Ամստերդամում, և Լոնդոնում, Նյու-Յորկում և Սիդնեյում, Բոմբեյում և Նեապոլում:

Յերբ նավաստիներն իրենց յերկար ճամբորդությունից հետո ցամաք են վերադառնում նրանք գինետուն են գնում, կամ աղջիկների մոտ: Համբուրգում, Նյու-Յորկում, թե Լոնդոնում՝ ամեն տեղ միևնույնն է կատարվում: Նավահանգիստներ լեփ-լեցուն են պոռնիկ կանանցով՝ սպիտակամորթ, սևամորթ գեղնամորթ և կարմրամորթ: Նրանք նստում են գարեջրետներում և նավաստիներին սպասում: Հոսում է արաղն ու գարեջուրը և մարդկանց ավելորդ, անպետք արարքներ թեկազրում:

Հիմա միայն, բանտի խցիկում մենակ նստած, յես կարող եմ հանգիստ գրել այս ամենի մտախն: Համբուրգ նոր յեկած ժամանակս յես դեռ չեյի գզում, թե ինչ անհուն անդունդ է, թե ինչ կեղտոտ ճահիճ է նավահանգստային քաղաքը, վորովհետեւ յես ջահիլ էյի և կամենում էյի նավաստի դառնալ:


1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20

Համբուրգում յես գործ չգտա: Համբուրգ-Մենբրիկյան շոգենավային գծի համար բանվորներ վարձող գրասենյակը մի բլրակի վրա յեր, վորտեղից նավահանգստի մեծագուլյն մասը յերեվում եր: Յես դեպի այդ գրասենյակն ուղղեցի քայլերս: Կարմիր աղյուսաշենքի առջևի հրապարակում նավաստիներ էյին կանդնամ:

Այնտեղ կային լավ հագնված սպաներ առևտրական նավատորմից, տեխնիկական պաշտոնյաներ, մեքենավարներ՝ չուլայած ոճիքներով, կարճ ծխամորճեր բերաններին: Նրանց արանքում թրև էյին գալիս վոտի վրա առևտուր անողներ, վորոնք առնում էյին ու ծախում ամեն ինչ՝ հուստապերչի ոճիքներից սկսած ու վոսկի ծխախոտատուփերով, ազամանգե մատանիներով և ծովային հագուստներով վերջացած: Ծենքի ներսում կյանքը յետում եր: Յերբեմն բացվում եր փոքրիկ պատուհանը և պաշտոնյան բարձր ձայնով հայտնում եր առաջ նավի անունը և ապա այդ նավի համար անհրաժեշտ նավաստիներ ի մի ամբողջ ցուցակ: Ով ցանկանում եր նրանց հետ գնալ, ով ընդունում եր ծառայությունը՝ նա պատուհանից ներս եր տալիս իր ծովային գրքույկը:

Նավի անունը լսելով շենքի առաջ սպասողներն իսկույն և եթ սկսում էյին քննադատել: Այդ «արկղը»—նավաստիների բերնում «արկղ»՝ նավ ասել է—անպետք բան է: «Ենտեղ նավապետը վատ է»: Ենտեղ անունը լավ է» և այլն:

Ինձ այնպես յերեկաց թե, ծովայինները մի մեծ բնատնիք են կազմում: Նրանք ճանաչում էյին բոլոր ծովերն ու նավերը: Նրանք իրարու պատմում էյին



իրենց նավերի մասին, և այդպիսով քոլորն ել ճանաչում էյին այն «արկղները», վոր իրենց կյանքում վոչ մի անգամ չէյին տեսել: Նավը առանձին աշխարհ է: Այդ աշխարհի բացարձակ տերն ու տիրականը նավապետն է: Յեթե նավապետը բռնակալ է՝ նրա մոտ ծառայելու կը գնան վատ նավաստիներ: Յեթե նա խելքից ու մարդասիրությունից զուրկ չէ, նրա մոտ լավ տղերք կը գնան աշխատելու:

Նավապետն անպայման մեծ գորություն ունի: Ծովագնացության ժամանակ վորոշ և խիստ որենքներ գոյություն, ունեն—նավապետից և կախված մարդկանց կյանքն ու մահը նավի վրա: Ծովային բանվորը քաղաքի պրոպետարից նրանով և տարբերվում, վոր նա քիչ թե շատ վորոշակի կապ ունի նավապետի հետ: Այստեղ մեծ գեր և խաղում ծովային բանվորի հարգանքը գեպի նավապետը: Նորեկ դիտողի համար դա մի քիչ բովանակիկ է թվում:

Կրկնում եմ, Համբուրգում գործ չգտնվեց ինձ համար: Յեւ մի քանի որ ել մնացի քաղաքում, աննպատակ թրև յեկա, սովածություն քաշեցի և ի հարկե, այնուամենայնիվ աշխատանք գտնելու հույսով, բայց իզուր: Յեւ անցա Բրեմեն, այնտեղից ել Բրեմենգաֆեն: Այստեղ ել ամեն ինչ Համբուրգի նման եր միայն փոքրացրած չափով: Համբուրգում արդեն քիչ փորձառություն էյի ձեռք բերել: Յեւ իմացել էյի, թե ինչպես պետք է նավի վրա ծառայություն գրանել: Պետք է ցածից սկսել: Յեվ յես ամենափոքրից ել սկսեցի— գեանախնձոր ստիկու և խոհանոցը մաքրելու պաշտոն վերցրի: Յես այդքանի համար ել ուրախ էյի: Այժմ ցամբողջ ախարհը բաց եր ինձ հա-

մար: Յես ծովային բացեր էյի գնում ովկյանոսային մեծ շոգենավով:

Արագ հավաքեցի իմ փոքրիկ կապոցը: Մեկնելուց յերկու որ առաջ վերջին ձևականություններն ավարտված էյին:

Ովկյանոսային նավագնացության պաշտոնյանները նավ բարձրացան, եկիպածը շարքի կանգնեց և մեզ կարգացին ծովային կանոնադրության բոլոր հոգվածները: Նոր այգտեղ մենք վորոշ պաշտոններ ու պարտականություններ ստացանք: Յես պարտավորվեցի ճաշը պրոքություն կատարել Հյուսիսային Ամերիկա և այնտեղից ել գեպի հեա, անորոշ ժամանակով, Հյուսիս գերմանական կոյգի արագընթաց շոգենավի վրա գեանախնձոր ստիկոյի պաշտոնով:

Մենք հեռացանք ափից: Ծանապարհորդները կանգնել էյին տախտակամաճի վրա, և ոգում ծածանվում էյին նրանց սպիտակ, թափահարվող թաշկինակները: Այդ հրաժեշտը լի յեր հույսերով ու արցունքներով, և նրա մեջ իրենց վախճանն էյին գրանում մարդկային վորոշ զգացումները, իսկ հույսերը նոր էյին ծնվում: Հնչեց յերաժշտությունը: Շոգենավի ծխնելույզներից յերնող դեպին ծուխը քուլաքուլա յերկինք եր բարձրանում: Քամին փչում և ցրում եր ոգում այդ ծուխը, վորպես մի մեծ և ղեղնազույն զրոշակ: Շոգենավի մեքենաները դեռ չէյին գործում: Յերկու փոքր նավ քաշում էյին մեր շոգենավը վեզեր դեպի հոսանքով: Սպիտակ թաշկինակները շուտով աներեվութեացան, և այլևս չէյին յերկվում հեռու ափին կանգնած փոքրիկ մարդիկ: Իմ մեջ զարթեց իմ բոլոր թողածներին կարոտը, բայց

յես շուտով խեղդեցի այդ զգացմունքը: Շոգենավը մի անգամ ևս կանգ առավ Բրեմհենհաֆենի նավահանգստում: Տախտակամած յելան առաջին կարգի նոր ճանապարհորդներ:

Շուտով բաց ծով դուրս յեկանք: Հյուսիսային ծովի առաջին կանաչագույն ալիքներն իրենց գիւղին առան մեր շոգենավը: Մեքենան համաչափ թըխթըխկում էր, ալիքները գալիս, գարկվում էին շոգենավին, և պտտում էին նրա չորս բոլորը ճշող ճաչերի յերամները: Բայց շուտով միայն ջուրն էր տարածվում մեր աչքերի առջև: Տախտակամածի վրա կանգնած էին ճանապարհորդները՝ գերմանացիք, զվիցերացիք, իտալացիք, աշխարհի բոլոր մասերի հարուստները:

Շոգենավն իր ա. և բ. կարգերում տանում էր 600 ճանապարհորդ, իսկ խորքում՝ ներքին տախտակամածը գրավել էին 2000 պրոլետար: Այդ յերկու հազար հոգին սեղմված էին մռայլ և նեղ տարածության մեջ:

Այստեղ հավաքվել էին Յեվրոպայի բոլոր անապաստան մարդիկ, վոր թողնում էին իրենց հայրենիքը, կարիքից զրոյված և աղանով կյանքի մասին յերագելով: Որը ծանր էր: Յերեխաները լաց էին լինում, աղամարդիկ և կանայք ծիծաղում էին, խոսում ու աղաղակում աշխարհիս բոլոր լեզուներով: Դա մի առանձին աշխարհ էր: Այդ յերկու հազար հոգու գլխավերեկում գրոսնում էին ընտրյալ վեց հարյուրը: Սրանք տիրում էին այն ամենին, ինչ յերազում էին այնտեղ, խորքում: Նրանք ամերիկյան կուսական այն անտառների սեփականատերերն էին, ուր գալիս էին աշխատելու ճանապարհորդ պրոլետարները, և այդ անտառներում նրանք հիշելու էին

իրենց հայրենիքը՝ ուսական, լեհական ու պրուսական գյուղերը...

Շոգենավն ինքնուրույն մի աշխարհ էր.— յերկրագնդիս փոքրիկ, լողացող մի նմուշ: Նույն վերնահարկն ու հատակը: Նույն դրախտն ու դժոխքը: Յերկու աշխարհ, վոր իրենց թույլ տախտակների վրա հենված լողում էին անձայր ծովում: Չկար ուրիշ մի վայր, վորտեղ ունեվորների և շունեվորների սահմաններն այնչափ խոր ու կոպիտ գծված լինէին, ինչպես ովկյանոսի շոգենավում: Հսկայական ալեկոծություն և հարկավոր՝ այդ սահմանները ջնջելու համար: Իմ ճանապարհորդությունների միջոցին ծովում յես շատ եմ տեսել փոթորիկներ, վոր ալիքից ալիք էին նետում մեր նավերը: Վերնահարկում գունատվում, գողում և վողում էին իրեն անգին կյանքը: Յերբ ալիքների սարերն ընկան մեր գլխին՝ կարծես, շոգենավը տաշեղի պես ալիքից ալիք թոցնելու համար, նրանք, վոր ժպտում և պարում էին ուրախության սրերին՝ խելագարության հասնող մահվան սարսափ սպրեցին: Իսկ ստորին տախտակամածի վրա նստած գաղթողները բութ խոսորտությամբ իրենց չար ճակատագրին էին հնազանդվում: Իմ առաջին ծովագնացության ժամանակ իսկ արդեն յես ականատես յեղա ալեկոծության: Մենք մի ջրանցք էին անցնում: Հեռվում յերեկում էր անդիլիական ափը: Փայլվում էին սպիտակ, կավճե ժայռերը: Ինձ տանջում էր ծովային հիվանդությունը, ծովի սառտանան, կամ՝ ավելի ճիշտ ասած՝ բռնել ու խեղդում էին ինձ ծովի բոլոր սառտանները: Յես անիծում էի ծովագնացությունը: Յես յերգվում էի՝ այլևս յերբեք նավ

չբարձրանալ: Ընկերներէից շատերը, վոր առաջին անգամն եյին նազ նստել՝ անիծում եյին և՛ նազը, և՛ ծովը, և՛ ալեկոծությունը, բայց այդ բոլորն ել անցողական եր: Յոթ որից հետո մենք հասանք Ամենբրիկա:

Տախտակամածները լի եյին մարդկանցով: Մենք կանգ առանք կարանտինի կայանում: Քննութեան յենթարկելուց հետո՝ նավարկեցինք Հուզսոնի հոսանքին հակառակ ուղղութեամբ: Յերաժշտախումբը նվագում եր այնպես, ինչպես Յեվրոպայից մեկնելու ժամին: Մենք անցանք ազատութեան արձանը, Նյու-Յորկի նավահանգիստը և ամերիկեան հոչակավոր Մինգ-Մինգ բանտը, ծովից տեսանք առաջին յերկնահասները:

Վերջապես մոտեցանք ափին: Մեզ նորից դիմաւորեցին ոգի մեջ թափահարվող թաշկինակները, և ճախարակներն սկսեցին իրենց աշխատանքը: Նրանք յերկաթե մատներով գուրս եյին հանում շոգենավի խորքից ճանապարհորդների իրերը, և իջեցրած արապի վրա խժժալով գետին եր իջնում ամբօխը: Մենք այժմ Ամերիկայում եյինք, աշխարհի խոշոր կենտրոններից մեկում, ուր ամեն մի ազգութեան ունեւոր իր բազմաքանակ ներկայացուցիչները: Մի վերջին հայացք ևս գեպի քաղաքը՝ և յես նորից դառնալու յեմ իմ աշխատանքին: Յես տենդարեն սպասում եյի այն ժամին, յերբ կը կարողանամ ափն իջնել, վորպէսզի տեսնեմ իմ պատանեկութեան յերազի իրագործումը, սեփական աչքերով տեսնեմ ու զննեմ այդ նոր աշխարհը:

Սա և ուրեմն Նյու-Յորկը: Զարմանքով լի բարձրացա յես Էրոպիս: Յերկնահասները բարձր

եյին, ինչպես լեռները: Փողոցն ազմկում եր՝ ասես զազանների մի վոնձակ: Կրագրավաճառներն աղաղակում եյին: Լսվում եր նշանափողերի ձայնը: Մայրաքաղաքի ազմուկն ամպի նման վորոտում եր մարդկանց գլխին: Այստեղ յես մի մարդ եյի՝ փոքր և անպաշտպան մարդ: Յես շուռ յեկա և քայլերս ուղղեցի գեպի նավահանգիստ: Հոգնած վերադարձա յես շոգենավ: Յերազումս հաղթանգամ մի վոստիկան տեսա, վորին նկատել եյի փողոցներից մեկի անկյունում՝ սաղավարտը մեծ և կլոր գլխին զբաժ: Նրա յերկարած ձեռքի ռետինե ձեռնափայտը ուղղած եր գեպի վեր:

Ինձ թվաց, թե հսկա վոստիկանը հանկարծ ազատութեան արձան դարձավ, վոր յես տեսել եյի նավահանգիստ հասնելիս և վորն ասես, իր վեհութեան ճաճանչներն եր ուղղում յեվրոպական ազգերին՝ ամերիկեան ազատութեան քարոզելով: Յես արթնացա և լուռ ու անբավական՝ յեյա աշխատանքի:

Յես հինգ անգամ ճանապարհորդել եմ արագընթաց նավով Բրեմենհաֆենից Նյու-Յորկ և յետ: Ովկայանի վրա յոթ որ աշխատելուց հետո՝ չորս, հինգ, յերբեմն և տասն որ կանգնում եյինք Նյու-Յորկի նավահանգստում: Ազատ որերին յես շրջում եյի քաղաքում, յերբեմն ամբողջ որերով շոգենավը չզառնալով: Յես նստում եյի ամերիկեան պանդոկի բարձր, պտուտակավոր նստարանների վրա և զարեջուր ու ոգի եյի խմում: Իմ ոտճիկը, ինչպես և իմ ընկերների ոտճիկը՝ մեր գրպաններից պանդոկապեաների գրպաններն եր լցվում:

Իսկ Նյու-Յորկում ազբատ մարդկանց կյանքը շատ

ծանր է: Ամերիկյան «բորզինգհաուզը»*, կատարյալ զեռուք է: Այնտեղ աղքատներն են ապրում: Յեթե ասում են թե գերմանացին հարստացել է Ամերիկայում, այդ նշանակում է, վոր հարյուրից հիսուն՝ զեղքում նա այդպիսի մի «բորզինգհաուզ» է պահել:

Վոչ վոք չի կարող այնպես լավ կեղեքել իր հայրենակիցներին սոսար յերկրում, ինչպես այդ անում է գերմանացին: Յեղ կեղեքումը նա վարագուրում է ազգասիրության ու հայրենասիրության քողով:

Յերբ Նյու-Յորկում իջնում է գիշերը, սոսար տեղերից Ամերիկա յեկած բոլոր անապաստան ու աղքատ մարդիկ դնում են նավահանգիստ և կամ լցվում են բուլ՝վարները և վորպես գաղաններն անատում՝ գիշերելու ոթեան են փնտրում: Նրանցից շատերին ցանցել են անխիղճ սրիկաների, վորոնք խլել են նրանց վերջին դոլլարները: Միակ բանը, վոր ֆնում է նավահանգստի թափթփուկներով սնվող այդ թշվառներին՝ դա քաղցամահն է: Յես ևս անցա այդ զըպրոցը

Յերբ վերջին անգամ Նյու-Յորկ ձանապարհվելիս յես հիվանդացա, շոգենավից ինձ հիվանդաճոց ուղարկեցին: Յես դեռ հիվանդ էյի, յերբ շոգենավը վընաց և ինձ թողեց Ամերիկայում ատանց փողի և աշխատանքի: Յես փորձեցի գործ գտնել ցամաքի վրա, բայց այդ այնքան էլ հեշտ չեր, քանի վոր յես լեզու չգիտեյի և հյուժժվել էյի հիվանդությունից ու քաղցից: Վերջապես տեղ գտա մի «բորզինգհաուզում», վորպես ծառա, խոհանոցի աշխատող, դանակներ մաքրող, մի

*) Աղքատ մարդկանց իջեվան:

խոսքով՝ ստորին մի ծառայող: Իրանից սոսաջ յես քընում էյի բուլ՝վարներում և կերակրվում էյի նավահանգստի թափթփուկներով: Մինչև իսկ վորոքումություն էյի խնդրում շոգենավերի վրա:

Ծառայի պաշտոնում յես փող քիչ էյի աշխատում, բայց համենայն դեպս՝ կուշտ ուսում էյի և ֆիզիքապես կազդուրվում: «Բորզինգհաուզի» տերը գերմանացի յեր: Նա ապրում էր այն փողերով, վոր կորզում էր իր աղքատ բնակիչներից. այդպիսով նա արդեն բավական գրամ դիզել էր:

Յերբ մի որ յես խոսք բացի այդ մասին՝ մի ժամ անց արդեն փողոցումն էյի, դարձյալ վորպես գործազուրկ: Մի քանի որ անց՝ ատաղձագործ դարձա:

Ասում են՝ աշխատանքը ամոթ չի բերի: Այդ ճշմարիտ է. նա միմիայն սպանում է: Աշխատանքն Ամերիկայում տենդորեն է յեռում և մաշում և մարդուն տասն անգամ ավելի արագ, քան այլ յերկրներում: Յես ջահել էյի և կորչել չէյի ուզում: Ընկերներս ասում էյին ինձ, թե Արեմտյան Ամերիկայում՝ վոսկին փողոցներումն է թափած: Յես գնացի Արեմուտք: Մի քանի դոլլար գրպանիս՝ հասա մի փոքրիկ քաղաք: Փողերս շատ շուտ սպառվեցին: Հազիվ հազ վոտքով Ֆիլադելֆիա հասա: Այնտեղ յերկաթուղու վրա բեռնակիր էյի, ապա կամաց-կամաց յեկա Բալտիմոր և ապա, վերջապես, Չիկագո:

ՎԱՅՐԵՆԻ ԱՐԵՎՄՈՒՏՔԸ

Չիկագոյում յես ծառայեցի մի հյուրանոցում, վորտեղ հաճախ կանգ էր առնում մի հաստ ամերիկացի: Նա տեսնում էր, վոր իմ աշխատանքն ինձ չեր

րավարարում: Մի որ մենք խոսակցություն սկսեցինք Ամերիկայի մասին և շոշափեցինք աշխատանք գտնելու խնդիրը: Խոսակցության վերջում նա հանեց զըրպանից իր հիշատակարանը և տվեց ինձ մի ֆերմայի հասցե. -- «Այդ ֆերմայում լավ բանվորներ են ընդունում»: Հասկանալի չե, վոր այդ առաջարկն ինձ գուրյեկավ: Ֆերման գտնվում եր Տեխասում, անձայր պրերիաների մեջ: Յես թողի Չիկագոն: Նոր արկածներ եյին հրապուրում ինձ: Ամերիկացին պատմում եր ինձ կովբոյների լավ կյանքի մասին, թե ինչպես են նրանք վայրենիների պես ձիարշավում անսահման տափաստաններում, պատմում եր, թե վորչափ շոտլու հոյակապ ե այնտեղի ընությունը և թե աշխատանքը լոկ գատարկ մի զբաղմունք ե նրանց համար: Յես տեղ հասա: Դա Տեխասի այն ձիարուծական ֆերմաներիցն եր, վոր հեռու յեն ընկած ճանապարհներից և շարունակ բանվորական ույժի պահանջ են զգում: Ինձ կովբոյի պաշտոն տվին:

Սկսվեց տափաստանի ուրախ և վայրենի կյանքը: Ֆերմայի բանվորներն ոտարագրիներ եյին՝ ուռաներ, լեհացիք, հնդիկներ: Յես միակ գերմանացին եյի: Չնայած ցեղի ու մորթու գույնի տարբերության՝ մենք լավ ընկերներ եյինք: Յերբ անցավ պատրաստվելու և սովորելու սահմանված ժամանակը՝ յես իսկական կովբոյի նման նստում եյի անթամք ձիերի մեջքին: Իմ ուսուցչուհին մի յերիտասարդ գտարյուն հնդկուհի յեր, վորին յես տվի «Վայրի Վարդ» անունը: Կանայք և աղջիկները ֆերմայում հավասար աշխատանք եյին կատարում տղամարդկանց հետ:

Չկար վոչ մի տարբերություն:

Վայրագ աշխատանքը վոչնչացրել եր բոլոր տարբերությունները:

Ամառվա յերեկոներին ուռաներն իրար մոտ եյին նստում և յերգում: Նրանց թախծալի յերգերը թափանցում եյին ամառվա գիշերների խորքը: Յերկինքը վայլում եր իր խոշոր ցուլացող աստղերով, իսկ տափաստանից գալիս եր ծագիկների և խոտերի բուրմունքը: Յես ջահել եյի, հնդկուհին ել եր ջահել: Մենք իրար կողքի նստում եյինք: Յես անզլիերեն վատ եյի խոսում, բայց ինչպես ծիծաղը, ուրախությունն ու արցունքներն են հատուկ բոլոր ազգերին՝ նույնպես ել բոլորի համար հասկանալի չե սիրո լեզուն: Տեխասի ֆերմայում ապրածու այդ ամառվա ամիսները յես հիշում եմ, վորպես Ամերիկայից մնացած ամենալավ հիշողություն:

Աշնանը յես հրաժեշտ տվի հնդկուհուն, վայրի ձիերին և մնացած ընկերներին: Հասա մինչև Միսսիսիպի գետը և փայտատար շոգենավով իջա մինչև Նոր Որլիան քաղաքը: Հիմա յես առաջվա նման անպաշտպան չեյի: Յես այլևս ամեն մի շահագործողի ձեռքն ընկած պրոլետար չեյի: Ֆերմայում յես մի քիչ փող եյի հետ զցել և հիմա ազատ մարդ եյի:

Նախքան կը սպասվեյին իմ միջոցները, յես պաշտոն գտա մի շոգենավի վրա, վոր յերթեկում եր Նյու-Յորքի և Ճենովայի միջև: Նավաստիներն այդ փոքր շոգենավը «Մակարոնի յերթեկեկ» եյին անվանում: Վորպես նավաստի՝ յես բարձրացրի իմ սոցիալական մակարդակը, քանի վոր վոչ թե գեանախնձոր եյի կճպում, այլ հետեվում եյի նավի

բուժեալին և սառը ուտելիքների խոհանոցին: Այդ պայմաններում ծովով ճանապարհորդելը, հարկավ, ավելի գուրեկան էր:

Յերկար տարիներ յես շարունակեցի իմ ծովային կյանքը: Յես այցելեցի Ճապոնիան ու Ձինաստանը, Ամերիկան ու Ավստրալիան: Աշխարհը սքանչելի էր, բայց ամենուրեք՝ փարթամ պալատների կողքին՝ բարձրանում էին բանտեր ու զընգաններ այն մարդկանց համար, վորոնք խախտում էին պալատաբնակ այդ մարդկանց ստեղծած որևէ քաները: Բոլոր յերկրներում էլ նույնն էր տիրում՝ անկախ բնակիչների ցեղից ու գույնից՝ սպիտակ, դեղին, սև, շագանակագույն, և նրանց մեջ չկար վոչ մի տարբերութուն:

ՎԵՐՋԻՆ ՄԵԾ ՆԱՎԱԳՆԱՑՈՒ-ԹՅՈՒՆԸ

Արևելյան Ասիայից յեկանք Համբուրգ: Շոգենավը սեմոնտի կարիք ուներ և տարվեց նավաշինարան: Հասավ բոլոր նավորդների յերկար հանգստի ժամանակը: Յերբ անցնում էինք Կարմիր-ծովը՝ յես հիվանդացած ջերմով: Գեթ ատոլջությունս վերականգնելու ցանկությամբ՝ ստիպված էյի գնալ իմ հայրենի Քյոլհեյմ քաղաքը: Յերջանիկ հանդիպում: Հայրս ծերացել էր: Նա ինձնով պարծենում էր և, կարծես մի հրաշք լինելի—ցույց էր տալիս ամբողջ քաղաքին: Ապա ինձ տարավ գյուղերը՝ իր բոլոր ծանոթների մոտ: Յես թույլ էյի տալիս, վոր բոլորն էլ ինձ դիտեն, և պատմում էյի հեռավոր յերկրների, ծովերի, քաղաքների և այն աշխարհների մասին,

վոր նրանք յերեսայական հասակում գժվարությամբ վորոնում էյին իրենց քարտեղիների վրա, վորպեսզի հետագայում այլևս յերեք չը հեշեն:

Յես իմ ճանապարհորդությունից բազմաթիվ հիշատակներ էյի բերել: Փղոսկրե գազաններ՝ Ձինաստանից ու Ճապոնիայից, քնքույշ, կոկիկ գամբյուղներ, զսրմանալի ձեի պայծառագույն ամանեղեն, սի հիանալի դաշույն, Հնդկական Ովկիանոսից՝ հղկած փղոսկրե զարդարանքներ, ծովախառվի մի խրովիլակ և ուրիշ շատ իրեր: Պարզամիտ բնակիչներն իրենց աչքերն ու բերանները լայն բաց էյին անում և հարգանքով նայում ինձ—յես ջերմանում էյի ընդհանուր գարմանքի ու հիացմունքի ճառագայթներով:

Մայրս պառավել ու սպիտակել էր: Տոնավաճառների ու գյուղերի առեմտուրը դեռևս շարունակվում էր, և յես՝ ինչպես անցած որերին, գյուղից գյուղ էյի շրջում իմ ծնողների հետ: Իմ քույր Վալյան գնացել էր Ավստրալիա: Յես ճանաչում էյի աշխարհը, Ավստրալիան քաշում էր ինձ. և վճռեցի գնալ իմ քրոջ մոտ: Ուզում էյի այնտեղ մի փոքրիկ հարստություն գիզել և հայրենիք գառնալով իմ ծնողների հետ ապրել: Մի քանի շաբաթ անց՝ յես դարձյալ հրաժեշտովի ծնողներին և դուրս յելա ովկիանոս, սակայն արդեն վոչ իրրեմ մի յերազող պատանի, այլ իրրեմ փորձված և աշխարհ տեսած մի մարդ:

Կրկին մեկնեցի Համբուրգից, անցա Ձիբրալտարը, Սուեզի ջրանցքը, Կարմիր ծովը և ապա հասա Խաղաղ Ովկիանոս: Մանիլայում նորից հիվանդացա, մալարիան ինձ անկողին ձգեց: Շոգենա-

վից իջեցրին և հիվանդանոց տարան: Բնական է, վոր շոգենավը չէր սպասել իմ առողջանալուն և ժամանակին շարունակել եր իր ճանապարհը:

Այդ գոտու վատառողջ կլիմայի շնորհիվ շոգենավերի կազմը շուտ-շուտ փոփոխվում է: Շուտով աշխատանք ստացա՝ Սիդնեյ մեկնող մի շոգենավի վրա: Սիդնեյ, ինչպես և Ռիյո-դե-ժանեյրո նավահանգիստները ամենագեղեցիկ ծովափնյա վայրերն են աշխարհիս յերեսին: Ծովը այստեղ առաջացրել է բնական ծոց, վորտեղ նավերը կարող են խարխախ ձգել ու պաշտպանվել ամեն մի փոթորկից:

Մենք նավահանգիստ մտանք: Բնիկները Ավստրալիացի շոգենավը խլացուցիչ աղաղակներով դիմավորեցին: Նավի վրայից յես դիտում էյի տեղի ունեցող շարժումը: Սպիտակամորթ անգլիացի վոսաիկանն իր սեռին մահակով ղեկավարում եր սեփամորթ բեռնակիրների խումբը: Դա մեծ նավահանգստի մի սոցորական պատկեր եր, վոր հարյուրավոր անգամ դիտել էյի իմ ճամբորդությունների ժամանակ, բայց վորն ամեն անգամ գրավում է մարդու ուշադրությունն ու շարժում նրա հետաքրքրությունը:

Մյուս որը յես իջա շոգենավից:

Քույրս ապրում եր Սիդնեյից վոչ հեռու՝ ավստրալիական մի փոքրիկ քաղաքում: Տեսարանը սքանչելի յեր: Փողոցները, մինչև իսկ ծովափում կառուցած թումբերը ծածկված էյին հսկայական սրածայր արմավենիներով, նշենիներով և կիտոնի ու նարնջի ծառերով: Ծովափից դեպի կենտրոն իջնող գետինը՝ փոխվում եր բացարձակապես ան-

պտուղ աղանդ անապատի, վորտեղ բնակվում էյին ավստրալիական թզուկ ցեղերը: Նրանք ասես դեռ շարունակում էյին ապրել քարե դարի շրջանում: Ավելի կենդանիների էյին նմանվում, քան մարդկանց: Իսկ յերկրի սպիտակամորթ տերերը վոչ մի միջոց չէյին խնայում այդ թզուկներին յերկրի յերեսից վերացնելու: Ավստրալիայի տափաստաններում շատ է զարգացած խաշնարածությունը և քոչվոր տեղացիներից շատերի գրադմունքը վոչխարներ հափշտակելն է:

Այս պատճառով խաշնարածները կատաղի կոիվ են մղում «անհանգիստ» նեգրերի դեմ: Տեղացիներին չեն գնդակահարում, այլ «ընտելացնում են» յեվրոպական ավելի ուժեղ կուլտուրային՝ չնչին աշխատավարձով աշխատող ճորտեր ու հովիվներ դարձնելով:

Միանգամայն արդարացի գործ կը լիներ՝ մի ճշմարիտ, բայց և դաժան գիրք գրել այն մասին, թե ինչպես Յեվրոպան տիրեց ամբողջ աշխարհին, թե ինչպես սպիտակ մարդը խաբեց և կողոպտեց սև, կարմիր, շագանակագույն և դեղին մարդկանց, իսկ հիմա շահագործո ամս վոչնչացնում է նրանց: Պետք է նկարագրել, թե ինչպես այս վայրերում սկզբից յերևում են քահանաներն իրենց քարոզներով, հետո գալիս են վաճառականներն իրենց ուղիով ու ապակե հուլունքներով և վերջապես գալիս են գործերը:

Ապա գրավվում է ամբողջ յերկիրը՝ կամ աշխարհամասը, և կապիտալիստական մեքենան սկսում է գործել ոտար յերկրներում՝ բնաջնջելով նրա բնակ-

չությունը: Այդ գիրքը պետք է պատմի, թե ինչպես վրեժ են առնում գունավոր ազգերն իրենց կեղեքիչներից, թե ինչպես համախմբվում են ու իրենց ապստամբությունները կազմակերպում: Գաղութային ազգություններն արդեն գրում են այդ գիրքը: Հնդկաստանի, Չինաստանի և Յեգիպտոսի ազգային հեղափոխություններն այդ մեծ գրքի խոշոր հատվածներն են հանդիսանում:

Ավստրալիայի բնիկ ազգությունները համարյա ամբողջովին չբացել են:

Հաղթանակել են սպիտակները: Ավստրալիան ողբատ է յեկեղեցիներով, բայց շատ հարուստ է ազանդներով: Յերկրի ըլոր ծայրերում և անկյուններում լսվում են նրանց հեղափոխական յերգերն ու քարոզները: Անգլիացիների ձեռնարկած ջերմեռանդությունը տոնում է իր հանդիսավոր հաղթանակը: Յես կարծում եմ, վոր ազանդները ծնունդ են առել այն ժամանակ, յերբ Ավստրալիան անգլիական վոճրագործների գաղութն էր հանդիսանում: Կրոնից այլասերված՝ յերկար շղթաներով կապկապված բազմաթիվ հանցավոր ծերունիներ քավում էյին իրենց հանցանքները:

Յերբեմն քրեական գաղութը ներկայումս դարձել է կապիտալիստական մի գրախտ, վորտեղ իշխում են նախկին վոճրագործների թոռները: Ինչ վերաբերու է այն ազաղակներին, վոր ազանդավորներն ուղղում էյին իրենց աստծուն՝ դա հին սարսափելի որերից մնացած սովորությունն էր:

Տեսնելով ինձ, քույրս լաց յեղավ ուրախությունից: Ուրախացավ և նրա ամուսինը: Խոսելու շատ

բան կար: Պատմում էյինք իրար անջատման հարյուրավոր ապրումներով ու պատահարներով լի այն տարիների պատմությունը, յերբ յերկար ժամանակ տեղեկություն չունեյինք մեկ-մեկու մասին: Քույրս և ամուսինը համեմատաբար լավ էյին ապրում: Նրանք քաղաքից վոչ հեռու մի ազաղակ ունեյին, վորտեղ բուսում էյին կիտրոնի, նշի ծառեր ու արմավենիներ, և վորտեղ ազաղակներս մեղվաբուծությամբ ու հավաբուծությամբ էյին գրաղվում: Հոգս չունեյին: Տընտեսությունից բացի փեսաս գրաղվում էր նաև իբ մասնագիտությամբ: Նա ներկարար էր:

Յես աշխատանք գտա կոնսերվի մի մեծ գործարանում: Համարյա մի ամբողջ տարի աղբեցի Ավստրալիայում, բայց հետո նորից գլացի ծովի կարող: 1914 թվի գարնանը գնացի Մեյլլուրն, վորտեղից Հյուսիսային-Գերմանական ընկերության շոգենավով վերադարձա Իրեմենհաֆեն:

III

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Սուեզի ջրանցքում տեղեկություններ ստացանք սկսված պատերաղմի մասին: Հասանք Չիբբալտար և տպա շարունակեցինք մեր ճանապարհը Բիսկայան ծոցով: Պատերաղմի լուրերն ավելի ու ավելի փորոշ էյին գառնում, և մեր անհանդստությունն ավելի մեծանում էր: Ռադիո-կոյանը շարունակ շրջապատված էր լինում ճանապարհորդներով:

Հանկարծ կայծակի արագությամբ տարածվեց շոգենավի վրա պատերաղմն սկսվելու լուրը. մենք պետք է ատաջին հեղոր նավահանգստում կանգնեյինք:

Վարչական մասն ու նավաստիները տախտակաժամ քարձրացան: Կարգացին սաղմական որհնքները: Մեր շոգենավը հայտարարեցին պահեստի կրեյսեր*): Յերաժշտախումբը շարունակ նվագում էր «Դոյաշլանդ ուրեր ալլես» և «Վախտ ամ Ռեյն» գերմանական աղագային հիմները: Բարձրացրին սաղմական զրոշը: Կանգ առանք սպանիտական Վիզգո նավահանգստում:

Այս ձևով պատերազմը տանելի չեր: Սպանական պինին եժան էր, սպանացիք՝ սիրալիր, և մենք մտածում էյինք, վոր պատերազմը մի յերկու շաբաթից հետո կը վերջանա: Բայց բոլորովին հակառակը դուրս յեկավ:

Մի գեղեցիկ որ նավապետը մեզ հավաքեց ու հայանեց, վոր Հյուսիսային-Գերմանական Լյոյզը պարտավոր է պայմանադիրը խախտել, վորովհետև մեր շոգենավը, իբրև պահեստի կրեյսեր, սաղմական նավատորմիդին էր պատկանում:

Մեր սոճիկը՝ դժբախտարար, կիսով չափ պիտի կրճատվի, մանավանդ վոր Գերմանիան ամբողջ աշխարհի հետ պիտի պատերազմի և պարզ է, վոր պիտի տնտեսի: Յե՛վ մենք, նավաստիներս պարտավոր եյինք քաշել պատերազմի նեղություններից մեզ բաժինը նկնող մասը: Մենք լուցինք և հնադանդվեցինք: Մի քանի շաբաթ էլ անցավ: Բայց և ելի Վիզգոն սիրուն գում էյին սպաները, ինժեներները և սվագ մեքենա՝ վարները. նրանք հարբել էյին իսպանական քաղցը քանուց և իրենց ճառերի մեջ հրաշքներ էյին գործում պատերազմի ճակատներում. նրանք շատ հայրենասեր

*) Խոշոր սաղմանավ:

էյին, գինի խմում, հասարակաց տներ հաճախում:

Նավի վրա ծառայողներին դրուժյունը քանի գնում, վատթարանում էր: Լուրեր էր, վոր վորոճում էյինք: Մեկն ասում էր, վոր մեր կես-սոճիկն էլ պիտի կրճատեն, և այսուհետև միայն զինվորական մթերաբաժին ենք ստանալու: Մյուսը հավատացում էր, վոր սոճիկներին միայն մի յերրորդն են կրճատելու:

Պատերազմը շարունակվում էր, ու մեզ էլ նախկին սոճիկի մի յերրորդը սկսեցին վճարել: Նավի վրա դժգոհություն ծագեց: Պայմանագրով մեզ խոստացել էյին լրիվ սոճիկ տալ մինչև այն ժամանակ, յերբ նավը նորից իր մայրենի նավահանգիստը մտնի՝ յերբ նավը նորից իր մայրենի նավահանգիստը մտնի՝ անկախ պատերազմից, փորձանքներից ու վորևե այլ անկախ պատերազմից: Հետո՝ մենք իմացանք, պատահականություններից: Հետո՝ մենք իմացանք, վոր Հյուսիսային Գերմանական Լյոյզը պատերազմավոր արհեստի Գերմանական Լյոյզը պատերազմական որհնքի վրա է հիմնվում, վորով հին պայմանագրերն ի չէք են հայտարարվում:

Մեր սոճիկը կրճատեցին, իսկ սպաներն ամբողջ պատերազմն անցկացրին իսպանական Վիզգո նավահանգստում՝ միշտ էլ լրիվ սոճիկ ստանալով: Մենք վորոշեցինք նավապետի մոտ պատվիրակություն ուղարկել. գնացի և յես, և առաջինն ինձ արտաքսեցին նավից, իբրև ագիտատորի և խռովարարի:

Նավի վրա դժգոհությունը աճում էր: Նավաստիները մեկը մյուսի հետևից վորևե արարքի համար նավից փողոց էյին շարվում: Մենք շատ թանգ եյինք նստում մեր տերերին: Նրանք ուզում էյին ազատվել բոլոր ստորին ծառայողներից: Որերս քարշ

եյինք տալիս փողոցներում, առանց մի կողմի փողի՝
զբաղաններումս և իսպանական լեզվի՝ բերաններումս։
Մենք վիճաբանում էյինք, միջոցներ փնտռում՝
«Բնչպես Գերմանիա ընկնենք, Բնչպես դուրս գանք»
փորձանքից»։

Յեթե սովամահ լինել չէյինք կամենում՝ գերմա-
նական մի հյուպատոսարան պիտի գտնեյինք և կամ
մի չեղոք յերկիր ընկնեյինք, ուր մեզ պահեյին։
Յերկար վեճից հետո՝ վորոշեցինք Իսպանիայի վրայով՝
Միջերկրական ծովը հասնել, այնտեղից ել՝ Իտալիա։
Ծախսեցինք վերջին ունեցած-չունեցածներս, վորպես-
զի Մազրիզ հասնելու փող ձեռք պցենք։

Ճամբա ընկանք։ Յեթե սովածությունը չլիներ՝
այդ հետաքրքիր ճամբորդությունն իմ հիշողություն-
ներից լավագույնը կը լիներ։ Բայց մենք գիշեր-ցե-
րեկ կայարանային շենքերում էյինք թավալվում։
Սարսափելի ճամբորդություն էր. վերջապես Մազրիզ
հասանք։ Յես հուսով էյի՝ թե այնտեղ մի գործ կգտնեմ,
ինչ ել վոր լիներ։ Բայց Իսպանիան Ամերիկա չի։
Աշխատանք չկար։

Գերմանական հյուպատոսարաններն արատա-
մանում պրոլետարիատի համար գոյություն չունեյին։
Մեծ դժվարությամբ մեզ հաջողվեց մի քանի պեղատ-
(իսպանական զրամ) ոժանդակություն ստանալ։ Սո-
ված էյինք։ Մազրիզում գերմանացի շատ ընկերներ
կային։ Մենք փողոցներն էյինք չափչփում՝ գործ
էյինք փնտրում։ Պատահում էր, վոր մի քանի կո-
պեկ աշխատում էյինք։ Յես մի ուր բեռնակիր էյի՝ մի
որ որավարձով աշխատող բանվոր։

Մենք յերկար չմնացինք Մազրիզում։ Սովը մեզ

այստեղից ել քշեց։ Հյուպատոսարանից տոմսակներ
ստացանք մինչև Բարսելոն։ Մենք՝ հին նավաստի-
ներս, այդ քաղաքում գործ գտնելու հույս ունեյինք։
Հինգ որից հետո հասանք Միջերկրական ծովի այդ
նավահանդիսաբ։ Քաղաքը լիքն էր գերմանացի նա-
վաստիներով։ Պատերազմը նրանց ել եր նավերից ափ
քշել։ Բոլորն էլ Գերմանիա էյին ձգտում։ Ամենաան-
հավատալի ծրագրերն էյին կազմում։ Վոմանք հա-
վատացնում էյին, վոր հայրենասիրական զգաց-
մունքն է նրանց ղեպի տուն քաշողը, մյուսները
այնտեղ կին ու յերեխա ունեյին թողած, սակայն
բոլորին էլ հայրենիք քշողը սովն էր, անգործու-
թյունն ու կարիքը։ Մենք վտանգավոր քայլի մի
վճիռ կայացրինք։

Բարսելոնի նավակայանում բազմաթիվ շոգենա-
վերի արանքում կանգնած էր մի հին ձկնորսանավ։
Թվում էր, թե նա տեղ չունի։ Մեր մեջ միտք հզա-
ցավ այդ խղճուկ նավակով Միջերկրական ծովը
ձեղքել մինչև Իտալիա։

Այս չափազանց հանդուգն մի ֆանտազիա յեր,
բայց մենք ամբողջ ժամանակ նրան էյինք վերա-
դառնում։ Կարիքի հետ աճում էր այդ մոռացված
նավակի գրավչությունը։ Մենք շատ անգամ ենք
ընթել յերկրի շուրջը։ Մենք հին նավաստիներ էյինք՝
շատ շատրմեր էյինք տեսել։ Մեզ համար Բնչ էր վոր
փոքրիկ Միջերկրական ծովը։

Գործի անցանք։ Նավը լողալու պատրաստեցինք։
Գերմանական նավերից մի քանիսին խնդրելով՝ քեզ
ուտեստ վերցրինք։ Ապա՝ կողմնացույց, փոթորկա-
չափ, ջրհան և յերկու դրոշակ՝ մեկը գերմանական,

մյուսը՝ իտալական: Նալը վեց առագաստ ուներ, և վեց թիակ: Մի անգամ ել հավաքվեցինք և ճամբորդության ծրագրերը քննեցինք: Ամենավերջին բուսեյին ընկերներն էին մի քանիսը վախեցան և ափին ֆնացին: 35 հոգի վտանգը հանձն առան: Ապրիլյան մի գիշեր, յերբ փոթորիկ եր ու անձրև, մենք մեկիկ—մեկիկ, գաղանազովի նավահանգիստ իջանք՝ գեպի աշնտեղը, ուր շղթայով կապած մեր նավն եր կանգնած: Շատ խոչընդոտներ պետք եր հաղթահարել: Ամենից առաջ հարկավոր եր անգլիական ու ֆրանսիական ծառայող ազնուները ձեռքը չընկնել: Յեթե նրանք մեզ նկատեցին, մեր ճամբորդությունը կը վերջանար նավահանգստից դեռ բաց ծովը դուրս չեկած. իսկ ծովում մեզ կարող եյին բռնել Անտանտայի նավերը և հետո կորսիկա կղզին ուղարկել: Յեթե ուղմանավերի մոտից ել անվնաս կարողանայինք լողալ՝ դենը բաց ծովի փոթորիկն եր մեզ վտանգ սպաննում: Յեթե մենք փոթորիկի հանդիպենք՝ կորած ենք:

Այդ ամենը մենք գիտեցինք, յերբ գողոննի նավահանգիստն եյինք գնում: Բայց աշնտեղ անվնաս հասնելով՝ մենք կարգի բերինք նալը և մուծ ու փոթորկալի գիշերով ճամբա ընկանք: Հերթով թիավարում եյինք: Այդ աշխատանքը մեզ բավականություն եր պատճառում: Վերջապես մի քանի ամսվա անգործությունից հետո՝ մեր ձեռները նորից բանում եյին: Նավահանգստից հաջող դուրս յեկանք: Առագաստը պարզեցինք ու ձգեցինք: Խարխուլած նալը դեպի բաց ծովն եր թռչում:

Մեր ճամբորդությունը տեկց 29 օր: Վերջին օրերը յերկու նավաստի գիշեր-ցերեկ անդադար չընա-

նի մոտ կանգնած՝ մեր խարխուլ նավակը լցվող ջուրն եյին դուրս թափում: Վերջապես մենք Պալերմոյի ծոցը մտանք: Դժոխային աշխատանքը խլել եր մեր վերջին ուժերը: Շորերս ծվեն-ծվին եյին յեղել, ինքներս կեղտավել եյինք: Վերջին բուսեյին, դեռ փրկարար նավահանգիստը չմտած՝ մի ուժեղ հոսանք զարկեց մեր նավին և մեզ նորից բաց ծովը նետեց: Վերջին ուժերս հավաքեցինք ու նորից թիակները վրա ընկանք: Առագաստը կախի՞ք ընկել կայմից: Ողում բացարձակ անգործություն եր: Ամբողջ ցերեկը և ամբողջ գիշերը մենք մաքանչում եյինք ծովի գեմ. նավահանգիստը յերևում եր: Վերջապես մենք հաղթահարեցինք հակառակ հոսանքը և Պալերմո մտանք: Վոչ վոք չեր ուղում հավատալ, Վոք մենք Բարսելոնից ենք յեկել: Նավահանգստի պարետը (կամենդանտը) մեզ հարցաքննության յենթարկեց: Բարսելոնի հյուպատոսից ստացած մեր թղթերը տեսնելով՝ նա քիչ փափկեց:

Մեր յերկար ճամբորդությունից հետո մենք փախստական աքսորյալների եյինք նմանում: Կարանտինում մեր իրերն ախտահանության յենթարկեցին: Հետո գինվորների հսկողության տակ մեզ քաղաքային բանտ տալան: Յերբ սկսեցինք բողոքել՝ մեզ սայլ նստեցրին և կայարան տարան: Աշնտեղ սպրում եր գերմանական հյուպատոսը:

Նա յերկար խոսում եր նավաստիների հավատարմության և հայրենասիրության մասին: Իսկ մենք սովից կը մեռնենք, յեթե մեզ փող չտան: Վերջապես մեզ տվին տաք կերակուր և ամսականը՝ մինչև Մեսսին: Մեսսինից գնացելք Ռեջիս, աշնտեղից՝ Հոսվմ, Ֆրորենցիա, Լուգանո և Լինգուոյի վրայով Մյուն-

խեն: Մենք հայրենիքումն ելինք: Բազմաթիվ արկածներից հետո 1915 թ. մեր հայրենի քաղաքը հասանք:

Յես վերադարձա մերկ ու աղքատ. ձեռքիս փոքրիկ կապոցն իմ վողջ հարստությունս եր: Հայրս մեռել եր: Մայրս—պառավ ու հիվանդ:

VIII. ՀԱՐՎԱԾԸ

Մինչև այժմ՝ յես պատմում եյի իմ բազմաթիվ ճամբորդությունների մասին. յես ցոլցոլ տվի բնթերցողներին լայնարձակ ծովեր, մեծ քաղաքներ, ոտար յերկրներ: Այժմ յես ուզում եմ նկարագրել այն, ինչ վոր իմ հոգու մեջ եր կատարվում. այնտեղ ել անհուն ուղիքան կա և անեղ փոթորիկներ: Թնդանոթների վառու պատերազմի դաշտում ինձ ցույց տվեց իրապանությունն առանց զարդի՝ ու ներկերի: Բացվեցին աչքերս և յես տեսա պատերազմի հոգեցունց արհաժիրքը: Հայրենիքումս պատերազմի ճակատ եր, բայց թիկունքումս ել մեռյալ հաշմանդամներ կային: Յես տեսնում եյի, թե ինչպես զինվորներին պատերազմի յեն տանում, ինչպես անլեզու անասուններին՝ սպանադանոց: Մնացին կանայք ու յերեխաները: Յեզ յեթե արքունիքը՝ մի մեծ, անհուն ծով կոչանար: Ժողովրդի թուլակամությունը զայրացնում եր ինձ: Իմ պատերազմի սարսափներին վերջ դնելու նշան դառնա: Այն, վոր յես հիմա գրում եմ, այն, վոր այն ժամանակ անում եյի՝ այդ ամենն իմ այդ ներքին լարումի հետևանքն ե:

Ոտարություն մեջ տալիներ եյի անցկացրել:

Տան կարոտը այրում եր ինձ: Վերադարձիցս մի քանի ամիս հետո մեռավ մայրս: Դրանից հետո Մյունխենի մի դարեջրատան սպասավոր եյի՝ յերկաթուղու գլխավոր կայարանում: Որական 15 ժամ եյի աշխատում: Կայարանում աղքատ դասն եր հավաքվում, կեղտոտ սեղանների մոտ, դատարկ սրահներում: Այստեղ կային և զինվորներ, — գյուղական անտառ աղերք, վորոնք բուծ համբերությունը սպասում եյին, թե յերբ իրենց կռվի դաշտ պիտի ուղարկեն: Նրանց կողքին նստում եյին բանվորներ և խոսում եյին պատերազմի, այդ «մեծ սրիկայություն» մասին:

Յերբ նրանք պատերազմի մասին եյին խոսում՝ նրանց դեմքերը արհամարհոտ եյին դառնում: Նրանք տեսնում եյին, թե ինչ և կատարվում բեմի հետեվը: Բեմի վրա՝ հայրենիք, սրբազան պատերազմ: Իսկ իրականություն մեջ՝ խոշոր թղթա խաղացներ, վաճառականներ, վոր ամբողջ բանակներ են շարժում սպեկուլյացիայով պարապելու համար. մինչեղս այն կողմը՝ հարյուր հազարներ մեռնում են ֆրոնտում՝ գնդակներից, իսկ թիկունքում՝ անունդի պակասից: Բանվորները պարզ տեսնում եյին այդ սրիկայական, ստոր խաղը: Բանվորները սովի դեմ ցույցեր եյին լիզվածակերպում: Բանտերը լեփ-լեցուն եյին: Անխոս, համբերատար բանվոր ժողովուրդն սկսեց աչքերը բաց անել:

Պատերազմի առաջին տարիները ժողովրդական տրտունջը թույլ եր: Բայց վերջին ամիսները տրտունջը քանի դնում՝ աճում եր և վերջապես 1918 թ. նոյեմբերին՝ բանվորների և զինվորների մեջքին ծանրացող պետությունը կործանվեց:

1917 թ. յես ամուսնացա: Մարդավարի ապրելու հույս ունեյի: Գործս կայարանում թողել էյի: Մեկ մի բանից էյի բռնում, մեկ՝ մյուսից: Մեծ գովարու-թյամբ ծայրը-ծայրին էյինք հասցնում:

Յես սոցիալիստական կուսակցության անդամ գրվեցի: Պատերազմի դեմ գործելու ցանկությունը որեոր աճում էր իմ մեջ: Կուսակցության հաղվա-դեպ ժողովներին յես մշտական մասնակից էյի: 1918 թ. նոյեմբեր 7-ին Մյունխենում հեղափոխություն բռնկեց:

Մենք հազարներով ու տասնյակ հազարներով՝ պատերազմի դեմ ցույցեր էյինք կազմակերպում: Մուրճի հարվածների նման ծանր ու հաստատ էյին հեռտորի խոսքերը, վոր ամբոխի մեջն էյին ընկնում: Հեռտորներն ասում էյին ընդամենն այն, վոր այդ հազարավոր մասսան էր մտածել՝ ամիսներ ու տարի-ներ: Ամբոխի գլխով փոթորկի նման լողունդներ էյին անցնում՝ «կորչի այս մասսայական սպանություն-ը», «հոց, խաղաղություն»: Մասսան շարժվում էր: Կարմիր զրոշակները ծածանվում են նրա առաջին շարքերում: Յերիտասարդ զինվորները յերթի առջե-վիցն են գնում: Ժողովուրդն արթնացել է: Յես կարմիր զրոշակ էյի տանում: Մենք քաղաք մասնք և մի գո-րանոցից մյուսը գնացինք: Ամեն տեղ մեզ զինվորա-կան ձեռներ էյին մեկնում: «Հաղթությունը մերն է»:
Վողջ քաղաքը կարճես տենդի մեջ էր: Ավտոմոբիլներ էյին գնում-գալիս՝ զինվորական շորերով լցված: Այդ որերին ու ժամերին վողջը բանվորներին էր պատկա-նում: Նրանք քնած չէյին: Բանվորներին և գյուղացի-ների խորհուրդը Մյունխենում ընտրված էր: Յես այդ

խորհրդի անդամ դառա: Մենք գնացինք ու գրավե-ցինք լանդտագի շենքը:

Կուրտ Եյսները, բանտից ազատվելով՝ մեր մեջ աշխուժություն ւրբեց: Նա կոչ էր անում մեզ՝ պաշտ-պանել հեղափոխությունը և սոցիալիզմը: Մենք յեր-կաթե վճռակամություն ունեյինք: «Հասնջ, հաղ-թությունը մերն է»: Այսպես շարունակվեց մի քանի որ իրար հետեվից: Յերը յես ուշքի յեկա, ինձ թրվաց, վոր այդ ամենը յերազ է: Յես հեղափոխությունը ապրել էյի վոչ թե գիտակցությամբ, այլ զգացումով, վոչ թե զլիտով, այլ սրտով: Յեվ այդ որից սիրտս ա-վելի շատ էր բարախում վոչ միայն ինձ, այլ և իմ այն յեղբայրների ու քույրերի համար, վորոնք ինձ նման զեպի վեր, զեպի աստղերն էյին գնում: Մենք յորձեցինք մեր ուժը, ի մի ձուլվեցինք: Մենք հե-ղափոխությունն էյինք: Մեր առաջնորդն էր բոլորիս սիրելի Կուրտ Եյսները:

Սկսվեց աշխատելու, գործելու շրջանը: Սոր-հուրդներն արդեն կազմակերպված էյին: Շատ վե-ճեր ու վիճաբանություններ յեղան: Ծանապարհն ա-դատ էր և թվում էր, վոր յերբեք հեռ չի խլվի այն, վոր ժողովուրդը նոյեմբերյան որերին է ձեռք բերել: Յեղբայրական համերաշխության, հույսերի և հավատի որեր էյին զրանք:

Յեվ ահա այդ որերին սպանվեց մեր սիրելի առաջնորդ Կուրտ Եյսները: Մեզ էլ վոչնչացրեց ատրճանակի այդ հարվածը, վոր ուղղված էր վոչ միայն մեր առաջնորդի, այլ և ազատության ու հեղափոխության դեմ: Ամբողջ քաղաքը հուզմունքի մեջ էր: Մենք փողոց թափվեցինք: Բանվորները

վրեժ էյին պահանջում: Նրանք պահանջում էյին դատել նրան, ով այդ սպանութեան բարոյական հրահանգիչն էր յեղել: Շատ անուններ էյին պատվում ողի մեջ: Մի մարդու անուն թռչում էր ամբոխի գլխին, մեկ բարձրանալով, մեկ սուղվելով մարդկային ծովի մեջ և նորից գնդակի նման նրա խորքից դուրս թռչելով: Բոլորն էլ իմացան այդ անունը՝ Աուեր:

Քաղաքում զանգերն էյին վրոտում փոթորկի նման.— Կուրա էյաները սպանված է:

— Կորչէն սոցիալիզմի դավաճաններն ու սպանողները: Կորչէ՛ դավաճան Աուերը:

Մենք հավաքվեցինք Հեղափոխական Խորհրդի շենքում: Նստարաններից բուռն քննարկով սպառնում էյինք: Մեկը նախագահութեան տեղից հրաժեշտի ուղերձ էր կարդում սպանվածի վրա: Բոլորին էլ պարզ էր.— Աուերը սպանութեան իսկական զրգոյն է:

Աչքերումս կայծակներ էյին փայլատակում: Ուղեղս մի բան ծակում էր: Անհասկանալի մի ուժ կախնել էր ինձ: Սպանվածն իմ աչքերի առաջ յեկավ՝ անթիվ վերքերից արյուն հոսեցնելով: Շեփորի նման հնչում էր նրա ձայնը՝ վրիժառու յեղիր սպանողից:

Ամենակուլ հրդեհ էր վառվում իմ ներսում: Քինախնդրութեան արցունքները, վոր ներսս էյին թափվել՝ հողիս էյին այրում: Յես ձեռքս բարձրացրի: Ատրճանակից փրթած կրակը ցրեց իմ աչքերից մշուշը: Արյունը հանդիստ բաբախում էր իմ քունքերում:

Ել մի գոռաք վրեժի մասին, յես արդեն հանել էմ սպանվածի վրեժը:

IX. ՓԱԽՈՒՍՏԸ ԴԵՊՐ ՀՈՒՆԳԱՐԻՍ

Յես իմ կյանքի վրա չէյի գողում: Ազատութեան համար մեռնելը՝ հեղափոխականի ճակատագիրն է:

Գնացքը սխառում էր գարնանային նոր արթնացած բուսթեան միջով: Վախից չէր, վոր փախչում էյի: Յեթե իմ մահը ոգտակար լիներ՝ ուրախութեամբ կմեռնեյի: Բարեկամներս ասում էյին.— դու պարտավոր ես փախչել: Քո փախուստը շարժման համար ոգուտ է:

Յերբ սահմանն էյինք անցնում, արեւը մայր էր մտնում: Ինձ ուղեկցող բարեկամներս հրաժեշտ տվին ինձ: Վաղ առավոտյան Վիեննա հասա: Այնտեղից գնացի Հունգարիա: Գերմանական վկայաթղթեր չունեյի յես: Դրա փոխարեն ինձ մոտ կար իսպանական թղթի մի կտոր՝ Բարսելոնից ստացած, մեջն իմ անունս գրած: Ուրեմն յես իսպանացի յեմ: Սահմանի վրա խիստ հսկողութեան կար: Բոլոր ճամբորդները պիտի դուրս գային գնացքից ու սահմանը վտտով անցնեյին: Սպան վերցրեց իմ թուղթը և ինձրկե վոչինչ չհասկացավ նրանից: Բայց թղթի յերկու յերեսի բազմաթիվ իսպանական կնիքներն ըստ յերեվույթին ազդում էյին նրան: Յես անունս ասի և մի բանի իսպաներեն խոսքեր բաց թողի, վորոնք իսկական իսպանացու համար թերևս հասկանալի չլինեյին:

Բայց սպան ցույց էր տալիս, վոր իբր հասկանում է: Զինվորները՝ հետաքրքրված շրջապատել էյին նրան: Նա չէր ուզում զինվորներին առաջ խայտառակ լինել և բաց թողեց ինձ: Յես գնացի Բուդապեշտ:

Գնացքում մեծ վիճարանութուն էր: Հունգարիան մեծ գեպքերի նախորդակն էր ապրում: Յես

իմացա, վոր կոմունիստները ձերբակալված են և բանտարկված: Զրուցում էյին, թե վոստիկանությունը Բելլա Կունին սպանել և Բուդապեշտում: Ծպայալ վոստիկաններ էյին շրջում: Յես կապեր չունեցի: Հոգնած և սոված վազվզում էյի քաղաքում, Դանուբի նավահանգիստը յեկա: Քարափին նավաստիներ էյին կանգնած: Գերմաներեն խոսակցություն լսեցի: Ավելի մոտիկացա: Հունգարական նավաստիները քաղաքական գրության մասին էյին խոսում: Դրանք կոմունիստներ էյին: Բախտավոր աստղն ինձ ընկերների մոտ եր բերել: Յես թագստոց գտա:

Մարտի 21-ին բանվորներն ու զինվորները քաղաքական իշխանությունը գրավեցին:

Ընկերներին բանտերից ազատեցին: Անտահման բերկրանք եր տիրում Բուդապեշտում: Զինված բանվորները հանձն առան պաշտպանել կառավարչական շենքերը: Կարմիր Գվարդիա կազմակերպվեց: Առաջին դեկրետները հայտարարվեցին: Այն մարդու անունը, վորի հետ բանտում դեռ յերեկ անասունի նման էյին վարվում՝ այսօր բոլորի բերանումն եր—Բելլա Կուն:

Յես ցնծում էյի ցնծացողների հետ հավասար: Բոլորս ել մոռացել էյինք նախորդ ամիսների տառապանքները: Ամեն տեղ հավատարիմ մարդկանց կարիք եր զգացվում: Հետեվյալ օրը Բելա Կունի հետ խոսեցի: Ինձ քաղաքական կոմիտարի պաշտոն ավին Բեքեյյան գորանոցներում, կարմիր բանակի գերմանական լեգիոնում:

Մոտենում եր մայիսի 1-ը: Յերիտասարդ բանվորա-գյուղացիական հանրապետությունն ստիպված եր դաժան կոնվուզել: Նրան սպանում էյին հակահեղա-

փոխությունը, ներքին անասական քայքայումը, սեակցիոն բյուրոկրատիայի սարսափը և բլոկադան: Նորաստեղծ կարմիր բանակը հաղթանակորեն կովում էր Հեխտսլովակների ու ուումինացիների դեմ:

Մայիսի մեկը ցնծության և հաղթանակի օր եր: Փողոցներն ու հրապարակները զարդարված էյին: Հասարակական շենքերի վրա կարմիր դրոշակներ էյին ծածանվում: Ամենուրեք տեղավորված էյին ազատության և պրոլետարական համերաշխության սիմվոլիկ նկարները: Մարկսի, Բեքեյի, Լիբկնեխտի, Ռոզա-Լյուկսեմբուրգի, Լենինի և Տրոցկու անդրիները սպիտակին էյին տալիս դափնյա մութ պուրակներում: Նույնիսկ ամենաազքատ փողոցը դրոշակներով եր զարդարված: Վոլջ քաղաքը ծփծփացող կարմիր ծով եր: Հաղթական քայլերով անցնում էյին գինված բանվորները: Հնձում եր յերաժշտությունը: Ադմկալի ծափահարության տարափի տակ ճառեր էյին արտասանում ժողովրդական կոմիտարիների խորհրդի անդամները: Այդ օրը ժողովրդական մեծ տոն եր:

Հուլիսի 2 ին սպիտակ սպաների ապստամբությունն սկսվեց: Դանուբի յերկու նավերի վրայից Խորհուրդների տան վրա կրակ բաց արին: Ապստամբությունը ճնշվեց: Հակահեղափոխությունը նորից վճռական կովի եր պատրաստվում: Սպիտակ բանակները մոտենում էյին: Հունիսի սկզբին զաղտնի հանձնարարություններով գնացի Վիեննա: Հունգարիա վերադառնալիս՝ սահմանագծի վրա ինձ ձերբակալեցին:

Միջատներով լիբը՝ հոտած մի ծակ նետեցին

ինձ: Վիեննայից ստացած մի թուղթ կար մտաւ: Մի քանի որից նրանք իմացան, թե ում են ձերբակալել: Գլուխս 20.000 մարկ գնահատեցին: Ինձ Վիեննա վերադարձրին:

Քաղքենի հասարակութեան աչքում յես ամենամեծ հանցավորն եյի: Ո՛ր, իմ գլուխը 20.000 մարկ ե գնահատված: Մի քանի որ յես վոչինչ չեյի ուտում՝ բացի վատ հացից և միայն տաք ջուր եյի խմում: 1919 թ. ավստրիական բանտերում կարելի չէր իմանալ, թե ինչ ե սովը: Վիեննայում այդ տարի շատ մարդ մեռավ սովից:

Այսպես որեր եյին անցնում: Միանդամ ինձ մոտ մի հյուր յեկավ՝ սատանի այն փոքրիկ ճուղը, վորի հետ ես պատահաբար ծանոթացել եյի Վիեննայում: Ինձ հաժար ուտելիք եր բերել: Նման այցելութեան նշանակութունը հասկանալ կարող ե միայն նա, ով աշխարհից կտրված բանտ ե նստել:

Դրանից մի քիչ հետո իմացա, վոր ինձ Գերմանիային են հանձնելու: Սեպտեմբերի սկզբին մենք դուրս յեկանք Վիեննայից: Գնացքը սլանում եր աշնանային մերկ դաշտերի միջով: Ինձ ուղեկցող վոստիկանները, ծուլ և քնքոտ՝ թավալվում եյին անկյունում...

Հետեյալ որը մենք Մյունխենումն եյինք: Ավտոմոբիլով վոստիկանատունդն ացինք՝ իսկ հետեյալ որն ինձ նախարգելանքի տուն ուղարկեցին: Նույն որը մի քանի պատանդներ գնդակահարեցին: Արդյոք շուտով ինձ էլ պատի տակ պիտի կանգնեցնեն:

Քննութունը ձգձգվեց: Դատական քննիչն ուղում եր անպայման դավադրութուն գտնել: Բավա-

կան չեր, վոր յես ճշմարտապես իրողութունն եյի՝ պատմում: Լրագրերը հայտնում եյին, վոր Կուրտ Եյսսերի սպանողի դատավարութունը իմինից առաջ գեկտեմբերի 5-ին ե տեղի ունենալու: Բայց ազնվագարմ կոմսը «հիվանդ» դուրս յեկավ՝ և բուժարան բնկավ: Իմ ցանկութունն եր, վոր իսպանիայի Սեր Կո-Վալլեյի այդ դատավարութունն իմինի նախարանը դառնա, վորպեսզի լայն մասսաների համար միանգամայն պարզ լինեն իմ քայլի բոլոր պատճառներն ու առիթները: Սակայն դատավորներն այլ կերպ վորոշեցին. 1919 թ. դեկտեմբերի 9-ին սկսվեց իմ դատավարութունը:

Յերկու հանցանք եր բարդվում ինձ վրա՝ սպանութուն և սպանութեան փորձ:

Մեղադրագրում մի սիրուն նախադասութուն կար՝ արարքը միանգամայն նախամտածված ե յեղել և անպայման սպանելու ցանկութեամբ. դատավճիռը կանխորոշված եր:

Ինձ ուղարկեցին Նեյդիկ: Մեր կառքի առջևից հրացանավոր զինվորներով մի ավտոմոբիլ եր գնում, հետևներիցս՝ նույնպես մի զինվորական ավտոմոբիլ: Ինձ հսկում եյին, վորպես քրեական հանցավորի:

Շատ շուտով հուզմունքս հեզնանքի փոխվեց:

Դատաքննութունը պիտի սկսեյին առավոտյան ժամը 8-ին, իմ տրամադրութեան տակ. 1 և կես ժամ կար: Ինձ փակեցին մի նեղլիկ խցում: Հետո յերկու վոստիկան յերկար միջանցքով, անթիվ հետաքրքրվողների մոտով՝ դատաստանական սրահ տարան: Կանաչ սեղանը դեռ դատարկ եր և միայն քարտուղարն եր իր տեղում: Հանդիսականների թիվն անհամար

եր: Յեկավ պաշտպանս և ձեռքս սեղանց: Դատախազն՝
իր անդը գրավեց: Նա գիշատիչի գեմք ուներ:

Գլխունս՝ աղմուկ էր: Ամենամեծ ախորժակով յես
կուզենայի հարձակվել այդ իրավարանական՝ դատախա-
զական սեղանի վրաս և այնքան՝ տրորելի, մինչև նա
չխոստովաներ՝ «վոչ, յես չեմ հավատում մեղադրա-
կան ակտի մեջ գրվածին: Յես այդ գրել եմ լոկ այն
պատճառով, վոր դու հեղափոխական ես ու բանվոր,
իսկ բանվորները հեղափոխություն են կատարել: Յես
պիտի վոչնչացնեմ քեզ ու այս դատավորների առջև
քեզ ժարգասպան պիտի հանեմ»: Այսպես վազում ե-
լին մտքերս: Բազեն իր գլուխը գործերի վրա իջե-
ցրեց:

Յեկան դատավորները: Նրանց մեջ էր և ժողո-
վրդական դատավորը: Լուրջ և մեծ արժանազակացու-
թյամբ շարժում էլին նրանք իրենց աթոռները: Նը-
բանցից մեկը՝ նիհար և պառավ մի խանութպան՝ չեք
գիմանում իմ հայացքին, յերբ յես նրան էլի նայում:
Հասկանում էլի, թե վորքան անհարմար և զգում նա
դատավորի գերում: Նրա կողքին նստել էր մի ու-
րիշը՝ նույնպես ժողովրդից: Մյուս ժողովրդական
դատավորն ամենայն հավանականությամբ կապիտա-
լիստ էր: Սա ավելի ինքնավստահ էր, վորովհետև,
ըստ յերեվույթին, շատ անգամ էր դատավճիռներ
կայացրել: Վորովհետև նա մեծ վոր ուներ՝ ստիպված
էր աթոռ սեղանից քիչ հեռացնելու:

Նախագահը՝ սև զգեստ հագած, հագավ իր ծիսա-
կան գլխարկը և սկսեց՝
«Հանուն ժողովրդի...»
Դատախազը մեղադրագիրը կարդաց: Դատախա-

զի ճառից հետո յես սկսեցի բողոքել և պահանջել,
վոր դատը ժողովրդական ատենակալների մասնակցու-
թյամբ լինի, սակայն դատարանը մերժեց իմ բողոքը,
իբրև հակադրինական: Ինձ հետ միասին բողոքում էր
պաշտպանս: Դատախազն ու դատավորները ժուլ-
տում էլին: Նախագահն ասաց, վոր այս ինչ ու
այն ինչ հողվածակետերով դատն ուղիղ և և սահմա-
նադրության համաձայն:

Ինձ 14 տարվա բանտարկության դատապար-
տեցին ու գժանոց նստեցրին:

X. ԳԺԱՆՈՑՈՒՄ

Հին Ռուսաստանի ցարական բանտերում հեղա-
փոխական մարտիրոսների ձեռներին ու վոտներին
շղթաներ էլին դնում: Մեզ բողոքիս ել ծանոթ
են այդ բանտերի սարքավորումը՝ ըստ հեղափոխական-
ների նկարագրություններից: Իմ ձեռքերը շղթայա-
կալ չէլին, վոչ եր վոտներս: Գիշեր ու ցերեկ քեզ
սեղմում են չորս սուրտ պատեր: Բարձր առաստաղի
տակ՝ փոքրիկ, յերկու ժանդակով սրատուհան: Բայց
այս պաղ պատերն ու այս յերկաթե վանդակն ավելի
շատ են ճնշում, քան շղթաներն ու բխովները: Բան-
տային կանոնադրության կետերը՝ անտեսանելի,
սակայն դաժան շղթաներն են: Նրանք հոգիդ են կա-
լանում և ծվատում:

Մի անգամ ևս յերեվակայությանս մեջ իմ մոտով
անցնում են իմ վերջին դրամային մասնակցող զերա-
սաններն ու յերկրորդական զերակատարները:
Հունգարական քանդակագործն զինվորը՝ վոր ինձ
ձերբակալեց, դատախազը, վոր իմ արարքը «սպանու-




Թյուն» անվանեց, «ժողովրդական» դատավորների
ճարպոտ դեմքերը:

Աչքերս վերև եմ բարձրացնում, վորպեսզի կա-
պույտ յերկնքում սուրացող ծիծեռնակների թռիչքին
հետևեմ: Ազատության, վառ արևի իմ կարոտը սաս-
ման չունի:

Գիշերները, յերբ մեր քարե գերեզմանների մո-
տով անցնող պանապանի քայլերն եմ լսում, այրվող
ճակատս խոնավ պատերին եմ սեղմում: Հաճախ յի-
րազներ եմ տեսնում: Ճամբորդում եմ նախկին իմ
ծանոթ նավերով, կանաչագույն ալիքներն ուռչում
են, բարձրանում և իմ շուրջը փոթորկում, աշխարհի
նոր մասեր են բացվում իմ առաջ և ամբողջ այդ աշ-
խարհի վրա գիշերներն անթիվ աստղեր են վառ-
վում:

Գուռ զրնգում և բռնուկին, բացվում և խցիկիս
յերկաթափանդակ զրնգում: Երբ ազս փչում է, Լուս-
ու մունջ պատտում ենք փոքր կնոր բախում: Բան-
տարկյալի գորշ շրթը կախ է ընկնում նիհար ուսերիցս:
Շուրջս բանտայալների դեմքեր՝ կույն և մաշված:
Որվա մեջ ժամով յերկինքն ենք տեսնում:

Իմ խցում պաշտության պատկեր կա: Ո՛ր,
պետությունը վողորման մեր բանտային խը-
ցերում Քրիստոսի պատկերն է կախ տալիս և մեր
բերաններն է խցկում՝ զուտ քրիստոնական փողորմա-
ծությամբ:



u 81

207

u
Ca1303

SMU

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

8

u-33